№ 2 (93) IX ՏԱՐԻ 28 ՓԵՏՐՎԱՐ 1899

"Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse :
Rédaction du "Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ



ՅԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՈՒՂՂՈՒՄԸ

ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ ՍՏՈՐԱԳՐՈՂ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

(Թարգմանուած ֆրանսերէն բնագրից)

Արդէն ազատուած Կրէտէն՝ սկսեց ապրել կանոնաւոր կեանքով։

Մի բուռն ժողովրդի հերոսական թափը մի անգամ՝ ևս յաղթանակել տուեց արդարութեան սկզբունքը, որի դէմ՝ դուք իզուր մաքառում էիք այնքան երկար ժամանակ։

Ընայելով ձեր բոլոր ջանքերին՝ թնդանօթների աղմուկով խեղդելու կրէտացիների հեծեծանքներն ու բողոքները, դուք վերջիվերջոյ ստիպուած եղաք զիջել, տապալելով ճնշման և բարբարոսութեան ռէժիմը։

Կարող ենք արդեօք յուսալ, որ ձգձգման քաղաքականութեան այս վերջին անկումը իզուր չի անցնիլ ձեզ համար և որ դուք կը հրաժարուէք վերջապէս յարատև դարձնելու այդ ռէժիմը՝ եղեռնագործ և աղէտաբեր Թիւրքիայի բոլոր ճնշուած ցեղերի և մանաւանդ հայերի համար, որոնց դառը ամենայն իրաւամբ պէտք է այժմ առաջնակարգ տեղ բռնի օրուայ քաղաքականութեան մէջ, քանի որ արդէն անդառնալի կերպով վճռուել է այդ դատի յետաձգելու պատճառ եղած կրէտական խնդիրը։

Տեղը չէ այստեղ, ո՛չ էլ ժամանակը գծելու հայկական դատի արիւնոտ պատմութիւնը բոլոր իր կսկծալից յեղյեղումներով։ Բայց և այնպէս պարտք ենք համարում յիշեցնել ձեզ, թէ հայկական տագնապը անխուսափելի հետևանք լինելով Թիւրքիայում տիրող անիշխանական պայմանների, իր զարգացման և զանազան արտայայտութիւնների մէջ միանգամայն անկախ չէ եղել սակայն ձեր բռնած դիրքից, — մի հանգամանք, որ այսօր ծանր պատասխանատուութիւն և բարոյական պարտաւորութիւններ է դնում ձեր վրայ հայերիս վերաբերմամբ։

Մինչդեռ յոյները կուում էին իրենց անկախութեան համար և փոքր ինչ յետոյ նոյն իսկ Թիւրք կառավարութիւնը „Հատտի-Շէրիֆ"-ով հռչակում էր, թէ ոչ ոք՝ որքան էլ իբրև խաղաղասէր լինի նա՝ չէ կարող չդիմել բռնի միջոցների, երբ վտանգուում են նրա կեանքն ու պատիւը,—հայերը դեռ ևս օրինականութեան զարմանալի ապացոյցներ էին տալիս, իրենց քրտինքով ոռոգելով իրենց հայրենիքի հողը յօգուտ քիւրդերի և Թիւրք պաշտօնեաների։

Բայց ամէն համբերութիւն վերջ ունի։

Սարսափելի ու յարաճուն հարստահարութիւնները և սիստէմատիկական անապահովութիւնը այն բոլորի, ինչ վերաբերում է մարդկային արժանապատուութեան, վերջապէս հանեցին հայերին համբերութիւնից և ձգեցին նրանց յեղափոխական խռովայոյզ վիճակի մէջ։ Ռուս-Թիւրքական պատերազմը, որ փոքր ինչ յետոյ սկսուեց յանուն Թիւրքիայի քրիստոնեաների ազատութեան, եկաւ արծարծելու այդ կրակը և փութացնելու այդ շարժումը, վերջանալով Ս. Ստէփանոյի 16-րդ և Բէրլինի 61-րդ համբաւաւոր յօդուածներով և տեղիք տալով հայերին կարծելու, թէ նրանց համար էլ պիտի հնչէր ազատութեան ժամը։

Սակայն հետևեալ մի քանի տարիների դառն փորձը ակներև ցոյց տուեց, թէ այդ յօդուածները մնում էին մեռած տառ, մինչդեռ դրութիւնը գնալով աւելի և աւելի ծանրանում էր...

Հայերին ոչինչ չէր մնում այդ պայմաններում, բայց եթէ ճակատագրապէս ոտ դնել նոյն յեղափոխական ճանապարհի վրայ, որով ընթացել էին իրենցից առաջ փագիշահների լուծը թօթափած ազգերը։

„Արիւն թափեցէք, որ ազատուէք“,—ահա՛ թէ ինչ կարող էին եզրակացնել Հայերը յունական, սէրբական և բուլղարական հարցերի լուծման պատմութիւնից։ Եւ Հայ ազգը ողողեց իր հայրենիքը իր արիւնով, բայց դուք լացէք ձեր ձեռքերը Պիղատոսի նման։ Նա զոհեց ամէն ինչ ազատութեան համար և տարաւ տանջանքներ, որոնց առաջ նսեմանում են մարդկութեան տարեգրութիւնների ամենազարհուրելի էջերը։ Եւ այսօր Հայաստանը յօշոտուած կարմիր սուլթանի ձեռքով՝ ընկած է այնպիսի ահռելի թշուառութեան մէջ, որի մասին ոչ մի բան չի կարող գաղափար տալ։

Աւելի քան 100,000 այրիներ, 50,000 որբեր և 300,000 մարտիրոսների և հերոսների ստուերները կանգնած են այսօր ձեր առաջ՝ իբրև փաստաբաններ իրենց ազգային դատի. . .

Ժամանակը չէ՞ միթէ շտապեցնելու այն, ինչ որ ճակատագրական կերպով կատարուելու է մի օր, որովհետև Հայերը այդքան զոհերից յետոյ չեն կարող վայր դնել իրենց զէնքը մինչև ձեռք չբերեն ուրիշ ազգերի պէս ապրելու իրաւունքը, մինչդեռ միւս կողմից պատմական անհրաժեշտութիւնը արդէն դրել է իր մահուան կնիքը սուլթանների տէրութեան վրայ։

Սարսափելի էին մեր կրած հարուածները, բայց այն հարուածները, որոնք փշրում են ապակին, կռում են պողպատը։

Հայ ազգը, որ դարերի ընթացքում դիմացել է այնքան ահեղ կատաստրոֆների, որ վերջին դէպքերի ընթացքում անձնուրացութեան և հերոսութեան այնքան փայլուն ապացոյցներ է տուել, պահած ունի իր մէջ դեռ ևս կենսունակութեան մի անսպառ աղբիւր և մի անսասան տոկունութիւն, որի մասին թող չխաբի իրեն Եւրոպան։

Արեան ծովերը անկարող եղան խեղդելու Հայ ազգի հայրենասիրական իղձերը և այսօր նա պահանջում է ձեզնից, որ վերջապէս ձեր ձեռքն առնէք նրա սրբազան դատը և իրագործէք ազգու և ստիպողական միջոցներով այն, որ այնքան երկար ժամանակ սպասում է ձեզնից նահատակ Երկիրը։

Մենք կամեցանք կատարել մեր պարտականութիւնը, յիշեցնելով ձեզ այն, ինչ պահանջում են ձեզնից արդարութիւնը, ձեր պատիւը և նոյնիսկ ձեր շահերը։

Իսկ մենք այսպիսի մի կացութեան հանդէպ՝ պիտի շարունակենք մեր գործը այն բոլոր եռանդով, որ կարող են ներշնչել մեզ մի ամբողջ ազգի յուսահատ վճռականութիւնը և յիշատակը այն արեան, որ մեր եղբայրները թափեցին՝ ամենաազնիւ դատերից մէկի համար։

ՄԱՀԻԱՆ ՊԱՏԻԺ

—

Պարսկաստանի Կեդրոնական Կոմիտէի վճռով՝

Ցունուար 3-ին (ն. տ.) երեկոյեան ժամը 6-ին մահուան պատժի ենթարկուեցան 9 նահատակ զինուորներու մատնութեան գործին գլխաւոր հեղինակներէն երկուքը՝ ՍՏԵՓԱՆ եւ ԹՈՒՍ ԱՌԱՔԵԼ։ Միւս մատնիչներու մասին Կոմիտէի վճիռը կը մնայ գաղտնի։

Բաղէշի Կեդրոնական Կոմիտէի վճռով՝

1898 Նոյեմբեր ամսուն՝ Մուշի Խասգիւղի մէջ մահուան պատժի ենթարկուեցաւ նոյն գիւղացի հանրածանօթ մատնիչ ՌԷՍ ԲԱՐՍԵՂ-ը, որ իր պժգալի ապարքներով պատուհաս մը եղած էր գիւղին եւ խոչընդոտ մը յեղափոխական գործին։

1898-1899

II

Նախորդ յօդուածում մենք խօսեցինք Հայի տրամադրութեան մասին այն կուսում, որ նա յայտարարել է տաճիկ կառավարութեան։ Բայց կուսի մասին խօսելիս չի կարելի անտես անել և միւս կողմը — սուլթանական իշխանութիւնը. այդ բաւական չէ. կարևոր է ի նկատի ունենալ նոյնպէս և այդ կուսի հանդիսատեսներին — դիւանագիտական աշխարհը, որ ներկայ դէպքում անշուշտ որոշ դեր պիտի խաղայ։

Տաճիկ կառավարութեան կողմից արդէն մի քանի անգամ արած անուղղակի դիմումները „Դաշնակցութեան“՝ անցեալ տարի ևս կրկնուեցին։ Այդ դիմումներով կազմակերպութեան առաջարկւում էր բանակցել այն պահանջների մասին, որոնց բաւականութիւն տալուց յետոյ „Դաշնակցութիւնը“ կը դադարեցնէր իր յարձակողական ձեռնարկները։ Ապագայում մենք առիթ կ՚ունենանք կազմակերպութեան որոշումները այս հարցի վերաբերմամբ իրենց կարևոր մանրամասներով հրատարակելու։ Այժմ մենք կը կամենայինք շեշտել միայն այն կէտը, որ այդպիսի մի դիմում տեղի չէր ունենալ, եթէ „Դաշնակցութիւնը“, իբր յեղափոխական կազմակերպութիւն, որոշ նշանակութիւն ստացած չլինէր տաճիկ կառավարութեան աչքում։ Կ՚ուզէք համարեցէք այդ քայլը մի նշան, որ տաճիկ կառավարութիւնը հասել է զիջումներ անելու անհրաժեշտութեան գիտակցութեան, կ՚ուզէք ընդունեցէք այդ՝ իբր մի խաղ եւրոպական միջամտութիւնը հայկական խնդրում չէզոքացնելու համար. կ՚ուզէք անուանեցէք այդ դիմումը լոկ ոստիկանական օրօրներ և ուրիշ ոչինչ, — բոլոր դէպքերումն էլ չի կարելի չնկատել մի հրապարակական խոստովանք, որ հայկական շարժումը մի անխուսափելի տարր է դարձել տաճկական քաղաքական կեանքում՝ և որ նրա հետ կուսելիս չի կարելի բաւականանալ այն սոսկալի միջոցներով միայն, որ ունի իր ձեռքում և որ այնքան անգթաբար գործ է դնում սուլթան Աբդիւլ Համիդը. . . Կեանքի շուկայից լսուող խրոպոտ ձայները թող շարունակեն հերքել յեղափոխական շարժման նշանակութիւնը. այդ չի հերքում ինքը սպառազէն թշնամին, որի կարծիքը ներկայ դէպքում

ամէնահեղինակաւորը պիտի համարուի, որովհետև ոչ ոք նրա չափ շահագրգռուած չէ մեր շարժման նշանակութիւնը նսեմացնելու գործում։

Միայն հայերը չեն, որ նեղում են սուլթանական կառավարութիւնը։ Անցեալ տարուայ սկզբին „Դրօշակ“-ում տպուեց երիտասարդ թիւրքերի մի դիմում վեց պետութիւններին, ուր իմիջի այլոց գտնում ենք հետևեալ տողերը.

„Կոմիտէս այս անգամ կատարելապէս համոզուած, որ սուլթանը միայն ուժի ազդեցութեան տակ տեղի կըտայ աղգի կամքին, հաշտութեան ամէն մի միջոց անտեղի համարելով, վճռել է մղել խիստ արշաւանք եւ կատաղի կռիւ, որպէս զի կարողանայ մեր դժբախտ երկրում հաստատել ներկայ յառաջադիմութեան համապատասխան իրերի մի դրութիւն։“

Վերջին տարիները երիտասարդ թիւրքերի մասին աննպաստ լուրեր շատ լսեցին. այդ լուրերը հասարակութեան մէջ և նոյնիսկ յեղափոխական շրջաններում միանգամայն բացասական տպաւորութիւն էին գործում, մանաւանդ այն պատճառով, որ երիտասարդ թիւրքերը չտեսնուած շանտաժի և կաշառակերութեան օրինակներ տալով՝ դրա հետ միասին երբեք անմիջական կռուի ասպարէզ անցնելու տրամադրութիւն չէին արտայայտում։ Բայց՝ ինկատի ունենալով մի կողմից վերևի հատուածը և միւս կողմից այն ընդհանուր օրէնքը, որ ամէն մի նոր հասարակական հոսանք իր զարգանալու և ձևակերպուելու համար պահանջում է ժամանակ, — մենք չենք կարող թիւրք երիտասարդութեան սյսօրուայ խօսքը չհամարել սպառնալիք՝ և այն էլ լուրջ սպառնալիք՝ սուլթանական ռէժիմի դէմ։ Այլ կերպ մտածողները թող յիշեն ուրիշ ժողովուրդների կեանքից օրինակներ։ Սկզբում՝ դրսի կամ ներսի հանգամանքները ծնում են անհատներ, որոնք խօսքով միայն հիմք են դնում որոշ մտաւոր շարժման, իսկ այնուհետև՝ արդէն շատ գործօնների ազդեցութեան տակ՝ կեանքը վերջապէս առաջ է բերում ներգործական դերի ընդունակ հոսանքներ։ Թիւրք ժողովրդի տգիտութիւնը, նրա մոլեռանդութիւնը և երկրում տիրող հակաքաղաքակիրթ պայմանները իհարկէ շատ աննպաստ են երիտասարդ թիւրքերի համար, բայց յամենայն դէպս՝ մեր կարծիքով՝ այսօրուայ „գործի կարիք զգացող խօսքն“ է, որ պիտի ժայթքի և իսկական գործը։ Ուրիշ ժամանակ, նորմալ հանգամանքներում, մենք այդպիսի ապագայ կարող էինք նախատեսել թիւրքական կեանքի միայն հեռանկարներում և երբեք մեզ չէինք թոյլ տալ մեր ձեռքի տակ եղած կցկտուր երևոյթներից կոյր լաւատեսութեամբ որ և է համարձակ եզրակացութիւնների գալ. բայց այն ներկան, որի մէջ ապրում է Տաճկաստանը, այնքան խառնակ է և այնքան լարուած, որ, ինչպէս հայերս որ և է 10-15 տարուայ ընթացքում անցանք մի պատմութիւն, որ բաւական էր նոյն իսկ մի ամբողջ դարի համար, այնպէս էլ այսօրուայ փոքրիկ երևոյթները թիւրքական կեանքում էգուց կարող են մեզ ներկայանալ արդէն հսկայական չափերով։ Թիւրքական շարժում — ահա ուրեմն և մի վըտանգաւոր վերք մեր թշնամու վրայ — մի վերք, որ արդէն չի կարող համեմատուել այն բազմաթիւ ուրիշ վերքերի հետ, որոնք շատ անգամ թիւրքիայի անդամահատութեան պատճառ եղան։ Այս վերքը արդէն „հիւանդ մարդու“ սրտի վրայ է աճում և ուրիշ ոչ մի կերպ չի կարող վերջանալ սուլթանական ռէժիմի համար, բայց եթէ մահով միայն։

Միանգամայն նոր և գուցէ աւելի ևս հետաքրքրական է մի այլ երևոյթ — անցեալ տարուայ վերջերին քիւրդ քաղաքական յանցաւորների երևան գալը։ 1898 թուի յունիսին „Դրօշակ“-ում զետեղուեց՝ Տր. Ս. ստորագրութեամբ՝ մեր քիւրդ բարեկամներից մէկի նամակը, որից յիշեցնում ենք հետևեալ տողերը.

„... Տգէտ մնացած ազգերը գերի կ'ըլլան։ Սահաւասիկ դուք ալ տգէտ մնացած ըլլալնուդ՝ տիրող կառավարութեան գերի եղած էք... Ինչո՞ւ օր մը տեղ մը չէք խմբուիր եւ կառավարական չէնքերը կոխեր... Սուլթան Համիտ ոչ խալիֆայ է, ոչ փատիշահ... Ձեզ ձեր հայրենակից հայերուն դէմ կը գրգռէ. դուք ինչո՞ւ չէք ըսեր, որ անոնք մեր թոփրագարտաշներն (հողի եղբայրներն) են, մեր դրացիներն են եւ միեւնոյն երկրի զաւակներն ենք... Միացէ՛ք. ձեր փրկութիւնը զէնքի ուժով միայն պիտի ըլլայ, այսինքն ապստամբութիւնով...“

Քիւրդական վայրենութեան ծանօթ մարդկանցից շատերը իրաւունք ունէին կարծելու, որ տեսական բնաւորութիւն ունեցող այս կոչը — լոկ քաղաքակրթութեան ճաշակը առած մի քիւրդ անհատի բարեմիտ խորհրդածութիւնների արդիւնք է և աւելի ոչինչ։ Բայց միաժամանակ երևան եկան փաստեր, որոնք կասկած չէին թողնում, որ քիւրդերի մէջ խմորուում է մի ինչ որ խլրտում։ Մենք չենք կարող այդ փաստերը կապել մեր բարեկամի կոչի հետ, իբր նրա հետևանք, բայց չենք կարող առանց ուշադրութեան թողնել այն հանգամանքը, որ այդ կոչը արդէն ունեցել է որոշ հող քիւրդական կեանքում, որ դա կեանքից այնքան կտրուած ձայն չէր, որքան կարելի էր կարծել առաջին անգամից։ Այդպէս՝ Պոլսում բանտարկուեցին անցեալ տարի յայտնի քիւրդական պետ Բէդրխանի որդիները, մեղադրուելով իբր „համիդէների ըմբոստութեան գրգռիչներ“։ Անատոլիայում տեղի ունեցան ուրիշ ձերբակալութիւններ։ Սկիզբը Կահիրէում և յետոյ Ժընևում սկսուեց հրատարակուել մի քիւրդերէն թերթ „Քիւրդիստան“ անունով, որ յամենայն դէպս բարեկամ չի կարող համարուել տաճկական բռնակալութեան. վերջապէս անցեալ տարուայ վերջերին Պոլսում տեղի ունեցաւ մի ամբողջ քիւրդական քաղաքական դատ։ Այս առթիւ մի մասնաւոր նամակով գրում էին մեզ այնտեղից.

„Քիւրդ պէյեր եւ համիտիէի պետեր բերուած են հոս եւ մեծ քննութեանց ու պատժոց կ'ենթարկուին. յաչս կառավարութեան քիւրդերը շատ ինկած են այժմ այն պատճառաւ, որ այս վերջինները ապստամբական

համբայ ընտրած են ինքնիշխանութեան հանելու նպատակաւ։"

Դատւում էին Պոլսում քիւրդերի մի քանի պարագլուխներ, իբր իրենց ցեղակիցների գրգռողներ թիւրք կառավարութեան դէմ։ Եւրոպական լրագիրները քիւրդերի այս տրամադրութիւնը անւանեցին սպառնալի՝ թիւրքերի համար և բացատրում էին նրանով, թէ սուլթանը ինքը զէնքեր բաժանելով քիւրդերին՝ այնքան ուժեղացրել է նրանց, որ այժմ նրանք բոլորովին անկերկիւղ կերպով յարձակւում են հայ և թիւրք գիւղերի վրայ ու գրաւելով նրանց՝ խլում են սուլթանից մէկ գիւղ միւսի յետևից։ Մտաբերենք թիւրք պալատականի խօսքերը այս առթիւ. „եթէ քիւրդերն էլ շարժւեցին, էլ ամէն բան վերջացած է։"

Իսկ Եմէ՞նը, որ ամբողջ տարի կռւում էր սուլթանի դէմ։ Իսկ Ալբանիան, ուր ծագած շարժումները սկզբում՝ ցեղական բնաւորութիւն ունենալով՝ յետոյ ուղղւեցին կառավարութեան դէմ և օսմանեան մի զօրաբաժին ջարդուփշուր անելուց յետոյ՝ երկար ժամանակ Էլբասան քաղաքը իր շրջականերով սարսափի մէջ պահեցին։ Իսկ Լիբանանի դրուզնե՞րը, որոնք անցեալ ամառ ապստամբական մեծ պատրաստութիւնների վրայ էին։ Իսկ Մակեդո՞նիան, որ իր մի քանի յեղափոխական կուսակցութիւններով տենդային յուզման մէջ է և որի ազատման գործը օրւայ հարց է միայն։ Իսկ Կրէտէ՞ն, որ իսպառ թառամեցրեց յունական պատերազմում Աբդիւլ Համիդի ստացած յաղթական պսակը և մի նոր զօրաւոր ազդանշան դարձաւ այն բոլոր ազգութիւնների համար, որոնք կռւի ճանապարհի վրայ են...

Վերջացնենք մեր խօսքը թշնամու մասին։ Մենք մատնացոյց արինք մի շարք անհերքելի երևոյթներ, որոնք վկայում են, որ Տաճկաստանի ներքին քաղաքական կեանքը օրըստօրէ թունաւորւում է հպատակ տարրերի բուռն դժգոհութիւններով։ Այդ իրողութիւնը, որքան արտայայտւեց դա 98 թւականի ընթացքում, մեզ կարող է բերել միայն սփոփիչ եզրակացութեան, որովհետև՝ իբրև մի-մի հարւածներ սուլթանական բռնակալութեան դէմ՝ այդ սպառնալի երևոյթները ստորացնում, թուլացնում, քայքայում են նրան...

III

Դառնանք այժմ դիւանագիտական աշխարհին, որ այս յօդւածի սկզբում անւանեցինք հանդիսատես մեր կռւի և որ դեռ 1856 թւից Պարիզի դաշնագրով ստանձնել է Թիւրքիայի քրիստոնեաների պաշտպանի դերը։ Եթէ հայկական շարժումը, թէև կարճատև, բայց արդէն անհամար կորուստներ կրած չլինէր, գուցէ բնական լինէր այդ հարցի մասին այսօր լաւատեսութեամբ խօսել։ Բայց այժմ երբ լաւ գիտենք, թէ որպիսի անտարբերութեամբ եւրոպական պետութիւնները մեղսակից եղան սուլթան Համիդին, երբ նա կազմակերպում էր հայկական կոտորածները. այժմ, երբ ականատես եղանք, թէ ինչպէս այդ պետութիւնները, կամենալով սուլթանի կամ իրար հետ ունեցած հաշիւները հայի գլխին մաքրել — թոյլ տւին „մեծ մարդասպանին" տարիների ընթացքում համարձակ ջարդել մեզ, — այժմ, ասում՝ ենք, իրաւունք չունե՞նք արդեօք դիւանագիտութեան նշանակութիւնը և ապագայում՝ խաղալիք դերը որոշելու համար գործ դնել նոյն կրիտերիումը, որով վերաբերում ենք իրեն՝ սուլթան Համիդին։ Այո՛, ինչպէս այդ մեր ամէնասոսկալի թնամին կարող է՝ որ և է սեփական շահից դրդւած՝ վաղը միւս օր հայերին այս կամ այն արտօնութիւնը տալ, այնպէս էլ այդ „հռչակաւոր" պետութիւնները՝ իրենց որոշ դիտումները առաջ տանելու նպատակով կարող են շատ բան անել մեզ համար։ Ինչպէս ինքը սուլթան Համիդը իր անվերջ հալածանքներով, իր փտած կառավարչական մթնոլորտով՝ իր հպատակ յոյների, լիբանանցիների, սէրբերի, բուլղարների, կրէտացիների դատին մեծապէս նպաստեց, նոյնպէս էլ այդ բարոյական սնանկները՝ անդադար արհամարհելով իրենց պարտաւորութիւնները դէպի մեզ, — կարող են հէնց իրենց մէջ հող պատրաստել ինպաստ մեր բաղձանքների իրագործման։ Այո՛, այդպիսի զարմանալի խաղեր սիրում է պատմութիւնը։ Բազմաթիւ օրինակներից յիշենք միայն մեր հարցի հետ, միայն Թիւրքիայի հետ կապւածները։ „Յոյները իրենց ազատութեամբ ամէնից շատ պարտական են իրենց հակառակորդների կրքերին," ասում է Բեօրնէ։ „Անգլիան, որ վախենում էր Ռուսաստանի ուժեղանալուց և Տաճկաստանի անկումից, ամէնից շատ նպաստեց թէ մէկին, թէ միւսին," պնդում է նոյն Բեօրնէն։ Ապստամբ կրէտացիների վրայ թնդանօթներ արձակողները մի քանի ամսից յետոյ իրենք դուրս քշեցին կղզուց թիւրք զինւորներին։

Այս փաստերին մենք տալիս ենք առանձին նշանակութիւն ոչ միայն այն պատճառով, որ ժամանակակից դիւանագիտութիւնը չի ճանաչում՝ ոչ մի ուրիշ սկզբունք, բացի „Հաւատամք ի մի Ճահ"-ի հանգանակը, այլ և նրա համար, որ աշխարհիս երեսին չկայ ոչ մի այնպիսի կալէյդոսկոպ, ուր գոյները այնքան անհաստատ լինէին, ինչպէս քաղաքական կալէյդոսկոպում։ Մի դիպլոմատ ասել է, դիւանագիտութեան մէջ չի կարելի նախագուշակութիւններ անել նոյնիսկ հետևեալ օրւայ մասին, և ճիշդ է ասել։ Ցիշենք կրկին անցեալ տարին։ Որքա՞ն անսպասելի դէպքեր տեղի ունեցան այդ մի տարում։ Զինաստանի մասնակի բաժանում, պալատական յեղափոխութիւն Զինաստանում, սպան-ամերիկեան պատերազմ, Փաշօդայի դէպք, Կրէտէի ազատութիւն, անգլիա-ամերիկեան միութիւն, զինաթափութեան հրաւէր, ռուս-տաճկական դժգոհութիւններ և այլն։ Ո՞վ էր այն խելօքը, այն հեռատեսը, որ կարողանար այս դէպքերի մասին թէկուզ միայն մի քանի ամիսներ առաջ անպայման ճիշդ նախագուշակութիւններ անել։ Ո՞վ էր այն քաջ

դիւանագէտը, որ չդողար՝ ընդհանուր առմամբ յանկարծակի տեղի ունեցած այս երևոյթներից շատերի առաջ, անկարող լինելով ասել, թէ ինչով կը վերջանան դրանք կամ շահերի ինչ նորանոր դասաւորութիւններ կըստեղծեն։ Ո՞վ է հետևաբար և այն համարձակը, որ ներկայ քաղաքական դրութիւնը կարողանար յարատև հաչակել և, որ գլխաւորն է, հիմք ունենար պնդել, թէ շատ նորանոր քաղաքական զուգակցութիւններից, որոնք անխուսափելի են ապագայում, և ոչ մէկը չի կարող լինել նպաստաւոր մեզ համար... Դժւար չէ իհարկէ պատասխանել այն հարցին, թէ ով է այսօր Թիւրքիայի բարեկամը, բայց թող մեզ ասեն նաև, տաճկի ո՞ր բարեկամը նրանից պատառներ չի խլել, նրան չի թուլացրել երբեմն նոյնիսկ աւելի քան նրա թշնամիները կամ ո՞րի բարեկամութիւնն է, որ չի փոխւել թշնամութեան և ընդհակառակն, այն էլ շատ կարճ միջոցում...

Մենք սովոր ենք լացի, աւելի ճիշդն ասած՝ մեզ սովորեցրին լացի, բայց մի փոքր էլ խնայենք մեր աչքերը, եթէ չենք կամենում սևը սպիտակից ջոկելու ընդունակութիւններս կորցնել. մի փոքր էլ այսուհետև յուսանք մեր թշնամիների վրայ, եթէ յուսահատւել կամ յուսահատւելու վրայ ենք մեր բարեկամներից...

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՄՈՒՇԷՆ

10/22 դեկտեմբեր 99

Բաղէշի վերջին դէպքերն ահաբեկ ըրին տեղիս կառավարութիւնն ու Թիւրքերը՝ Լուր կը պտըտի հիմա թէ Սերոբ փաշան (Աղբիւրը), չկրնալով Բաղէշը գրաւել, կը պատրաստւի Մուշի վրայ յարձակւելու։ Թիւրք ու քիւրդ, սրտերնուն վախէն, արևը մայր մտնելէն ետք ա՛լ դուրս չեն ելլար պտըտելու և գիշերը դաշտի մէջ ճամբորդելն ալ մէկդի դրած են։ Կառավարութիւնը անտարբեր չկեցաւ այդ լուրերուն առջև. աւելցնել տւաւ թէ գիշերւան և թէ ցերեկւան պահնորդներուն թիւը, և մանաւանդ հսկողութիւնը խստացուց քաղաք տանող ճամբաներուն վրայ։ Մանրակրկիտ խուզարկութիւն և քննութեան կ'ենթարկւին հիմա քաղաքս ելումուտ ընողները։

Երկու շաբաթ առաջ ալ, նոյեմբեր 20-ի լուսադէմին՝ ոստիկան-զինւորները յանկարծ կը պաշարեն Բերդըկ հայաբնակ գիւղը, կասկածելով թէ յեղափոխականներ պահւըտած լինին հոն։ Գիւղը պաշարելէն ետք, արշալոյսին կը մտնեն գիւղը և կըսկսին խուզարկել մանրակրկիտ կերպով. բայց բան մը չեն գտներ։ Այդ անյաջողութենէն սրտմտած, ջոկատի հրամանատարը կը հրամայէ գիւղի այր մարդիկը քշել տանել գիւղի մէկ կողմը, ուր կըսկսին ծեծել և տանջել, զէնք պահանջելով անոնցմէ. բայց չեղած տեղէն ինչ կրնային առնել։ Իսկ այդ միջոցին զօրքին հրաման կը տրւի աւարի տալ գիւղը։ Վայրենի ու սովալլուկ զինւորին այդ հրամանն էր պէտք. կը խուժեն տուները, ձեռքի տակ ինկածը կը վերցնեն, բռնի կը խլեն կիներուն վրայ եղած զարդերը. կը ծեծեն ու կը բռնաբարեն, և վերջապէս բան մը պակաս չեն թողուր այն բոլոր խժդըժութեններէն, որուն ընդունակ է թիւրք զինւորը անպաշտպան էակներուն հանդէպ։

Բայց մատնիչներն ալ անպատիժ չեն մնար հիմա։

Մատնիչ ՌԷՍ ԲԱՐՍԵՂԻՆ Խասգիւղին մէջ տէռօրի ենթարկումը արդէն հաղորդած ենք։ Այդ մահը կը յուսանք թէ խրատ լինի քանի մը ուրիշներու համար, որոնք ոտնակոխ ընելով ամէն սրբութիւն, առիթը փախցուցած չեն երբեք իրենց եղբայրներուն դաւելու։ Հիմա թող գիտնան որ կայ իրենց վրայ հսկող անողոք աչք մը, որ կրնայ ուշացնել պատիժը, բայց երբե՛ք ներել.. եթէ յամառին տակաւին շարունակել իրենց վասակի գործը։

Իրերու այս վիճակին մէջ անմխիթար երևոյթ մըն է քաղաքիս ունևոր դասակարգին անտարբերութիւնը։ Մոռցած դեռ երէկի տագնապներն ու աղէտները, ամէն մարդ ինկած է իր գձուձ շահերու ետևէն, դրամ դիզելու, չխորհելով որ այդ ամէնը դարձեալ բաժին պիտի դառնայ քիւրդին կամ թիւրքին, թէ կեանքերնին ալ վրայ պիտի տան նորէն — եթէ իրենց նպատակ չդնեն ամէնէն անյետաձգելի բանը արդի պարագաներուն մէջ — ի ն ք ն ա պ ա շ տ պ ա ն ու թ ե ա ն գ ո ր ծ ը։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿ

Պետերբուրգ, 5/17 փետրւարի 99

Հէնց այս րոպէիս, երբ գրում եմ այս նամակը, կովկասեան կառավարչապետ իշխան Գօլիցին՝ իր մտերիմ թելադրիչի՝ Միցկեվիչի հետ այստեղ՝ Պետերբուրգ են, ուր, պէտք է կարծել, շնորհ են բերել „կարեւոր" ծրագիրներ պաշտպանելու համար։ Թէև հեռու Կովկասից, բայց երևակայում եմ, թէ ինչ իրարանցում է տիրում Թիֆլիզում, ուր, ինչպէս շատ անգամ, այժմ էլ անշուշտ ենթադրում են, թէ կառավարչապետը այլ ևս չի վերադառնալ և նրա տեղ կը նշանակւի մի նորը։

Երկու տարի է ընդամէնը, բայց ի՜նչ ահագին տարբերութիւն։ Երկու տարի առաջ, երբ իշխան Գօլիցին նշանակւեց կառավարչապետ, Կովկասում քաղցրիկ երազներ էին տեսնում. ազգաբնակութիւնը, ինտելիգէնտ ու վարչական շրջանները, վերջապէս մամուլը աւետում էին մի նոր, Շերեմետևեան ուղղութեան աւելի բեղմնաւոր շրջան։ — „Կրթւած մարդ է, նշանաւոր տոհմի ներկայացուցիչ, եռանդի և կամքի տէր, ասում էին շատերը, և նրա գալով՝ երկիրը նոր արշալոյսներ կը տեսնի։" Վօրոնցովի օրերն էին սկսել երազել..

Եւ երբ, Պետերբուրգ եկած, ես պատմեցի մի յարգելի ռուս մարդու, որ երկար ծառայել է Կովկասում և լաւ ճանաչում է Գօլիցինին, թէ ինչպէս է վերաբերում Կովկասը Գօլիցինի նշանակւելուն, — նա ժպտալով ասաց.

— Այո՛, իշխան Գոլիցին մի „փոքրիկ“ Վլրոնցով կարող է լինել. Գոլիցինի տոհմին յատուկ է այդ գիծը. բայց այդ կախուած է նրանից, թէ ովքեր կը լինեն խորհրդականները. լաւ խորհրդականներով՝ նա փոքրիկ Վլրոնցով կը լինի, իսկ վատ խորհրդականներով՝ փոքրիկ Պոբեդոնոսցեվ։

Դժբախտաբար այդպէս էլ եղաւ։ Թիֆլիզում շատերը գիտեն, թէ սկզբի ամիսներում օր օրի յետևից ի՞նչ գեղեցիկ լուրեր էին բխում իշխան Գոլիցինի ապարանքից։ Ընդունելով վարչական մարմնի ներկայացուցիչներին՝ նա ասում էր. „Ինձ համար չկայ ազգութեան խտրութիւն և ձեզ համար էլ չպիտի լինի. ինձ հարկաւոր են լաւ պաշտօնեաներ և դրանց պէտք է փնտռել ամէն ազգի և կրօնի շրջանում։“ Դիմելով կովկասեան գրաքննական կոմիտէտին, իշխանը ասել էր. „Մամուլին ազատութիւն տուէք քննադատելու պաշտօնեաներին. ես ուզում եմ այդ ճանապարհով ճշմարտութիւնն իմանալ։“ Իսկ իր նախկին ծանօթ հայ զինուորականներին (իշխանը առաջ ծառայել է Կովկասում) նա շատ անգամ մտերմաբար կրկնել է, որ ինքը „ատում է ազգայնական հալածանքը և միանգամայն արմատախիլ կ՝անէ ամէն մի այդպիսի փորձ,“ — մի խօսքով մարգարիտների մի հիւսուածք, որ մի որոշ ժամանակից յետոյ գարշելի յանդգնութեամբ „աղբի“ մէջ գցուեց, որպէս զի դրա տեղ պարզուի ազգայնական հալածանքի ու խտրութեան անարգ դրօշակը, որ այնքա՜ն եռանդով և ոգևորութեամբ ծածանեցնում են ամբողջ Կովկասի վրայ մի շարք պաշտօնեաներ և դրանց թւում նաև իշխան Գոլիցինի ընտրած նենգամիտ խորհրդականները և արկածախնդիր թելադրիչները...

Մի օր՝ ընդունելով իր պալատում հայոց պատրիարք կաթողիկոս Խրիմեանին և խօսելով Էջմիածնի գործերի և կառավարչական ու կաթողիկոսական յարաբերութիւնների մասին, իշխան Գոլիցին ասել է.

— Ես մեծ հաճակրութիւն եմ տածում դէպի Ձերդ վեհափառութեան անձնաւորութիւնը, բայց չեմ կարող թագցնել, որ դուք շրջապատուած էք միանգամայն անվստահելի խորհրդականներով, որոնք, ցաւ է ասել, մեր յարաբերութիւնները և Էջմիածնի գործերը հասցրել են այժմեան տխուր և նոյնիսկ վտանգաւոր վիճակին։

Տարաբախտաբար ամենայն հայոց կաթողիկոսը չկարողացաւ կամ իրաւունք չունեցաւ պատասխանելու.

— Ես էլ, Ձերդ պայծառափայլութիւն, հաճակրութիւն եմ տածում դէպի ձեր անձնաւորութիւնը, բայց չեմ կարող թագցնել, որ դուք էլ ես շրջապատուած էք միանգամայն անվստահելի խորհրդականներով, որոնք, ցաւ է ասել, մեր յարաբերութիւններն ու կովկասեան գործերը հասցրել են այժմեան տխուր և նոյնիսկ վտանգաւոր վիճակին։

Դուք անշուշտ հետաքրքիր էք իմանալու, թէ ովքեր են կազմում այն „խորհրդակցական“ մարմինը, որ այնքա՜ն վճռական ներգործութիւն ունեցաւ կամքից զուրկ իշխան Գոլիցինի վրայ։ Ահա։ Գեներալ Փրէզէ, նախկին նահանգապետ Երևանի, որ Պոբեդոնոսցեվեան ուղղութեան համար նահանգապետի պաշտօնից բարձրացրեց ժանդարմների շէֆի կարևոր պաշտօնին և ապա Պետերբուրգից ուղարկեց Թիֆլիզ՝ կառավարչապետի օգնականի պաշտօնով՝ „ռուսացման“ գործում Գոլիցինի աջ ձեռքը լինելու համար։ Կառավարչապետի դիւանատան դիրեկտոր Միցկեվիչ, յունադաւան լեհացի, այսինքն լեհացու ամէնավատ տեսակը, աւելի ռուս՝ քան ամէնաթունդ ռուսը, երկչոտ ու կասկածոտ, շողոքորթ ու ինտրիգան։ Նահանգապետ Բլկով, որ դատաստանական նախագահի պաշտօնից Գոլիցինի կողմից կանչուեց նահանգապետութեան միայն մի արժանաւորութեան — հայատեցութեան — համար, եթէ չհաշուենք նրա մի այլ աչքի ընկնող արժանաւորութիւնը — կաշառակերութիւնը, որով մեծ հռչակ էր ստացել դատարանական շրջաններում... Փոխ-նահանգապետ Ստեփանովիչ, որին ճակատագիրը գցեց Կովկաս, բանաստեղծի ասելով, „քարեր եւ աստիճաններ որսալու նպատակով“ — մի տենչանք, որի համար ազգայնական հարցը ամէնակարճ ճանապարհն է այժմ... Ահա դա է այն քառապետութիւնը, որ երկու տարուց իվեր տօն է տալիս գործերին և որ իր նպատակներին հասնելու համար ո՛չ միայն գաւառները ձգտում է լեցնել այնպիսի „չնաշխարհիկ“ նահանգապետներով, ինչպէս է գեներալ Կիրէեվ Գանձակում, կամ թէ այնպիսի սրիկայ գաւառապետներով, ինչպէս Բօգուսլավսկի Իգդիրում, այլ և հնարաւոր է համարում երկրի միակ պաշտօնական լրագիրը յանձնել մի այնպիսի կլասիկ-ֆիէրիստի, ինչպիսին է Վէլիչկո, „Կաւկազ“-ի այժմեան խմբագիր-լրտեսը...

1897 թւի յուլիս ամսին էր, երբ լուր տարածուեց թէ Թիֆլիզի նահանգապետ իշխան Շէրվաշիձէ, ոչ հայատեաց մի մարդ, հրաժարւում կամ՝ աւելի ճիշդ է ասել՝ հրաժարեցուում է պաշտօնից։ Դղրդիւնը մեծ էր։ Իշխան Շէրվաշիձէի հրաժարականը ազդանշան էր։ Եթէ նա մնար, կը նշանակէր՝ տեղական խաղաղասէր կուսակցութիւնը յաղթող հանդիսացաւ. իսկ հրաժարուելը — վերջնական ապացոյց, որ Ֆրէզէ-Միցկեվիչեան խումբը տիրապետեց... ոչ, ի՞հարկէ, թշնամու բանակին, այլ կառավարչապետի ապարանքին... Եւ մի ամիս հազիւ անցած այդ կասկածները, տարաբախտաբար, արդարացան. Շէրվաշիձէ, չտանելով իր անձի և երկար տարիների գործունէութեան դէմ լարած դաւերը, հրաժարական տուեց, որ, իդէպ ասել, կառավարչապետը ընդունեց մեծ հաճոյքով. այդ հրաժարականին հետևեցին մի քանի այլ հրաժարականներ, և այդ օրից սկսուեց մի նոր կատաղի կամ աւելի ճիշդ՝ անաժամ արշաւանք յանուն մեզ ծանօթ „ռուսացման“...

Նպատակին հասնելու համար ոչ մի միջոց չխնայելու սկզբունքը դարձաւ Գոլիցինեան սիստէմ։ Այդ ապացուցանելու համար, ես կը յիշատակեմ երեք բնորոշ փաստեր. 1) տեղացիներին հեռացնելը պետական ծառայութեան բոլոր ասպարէզներից, 2) տեղական ինքնավարական մարմինների խեղդելը, ինչպէս այդ ցոյց են տալիս Թիֆլիզի դումայի դէմ գործ դրած միջոցները, և 3) Հայոց դպրոցների փակումը և մանաւանդ այդ դպրոցների կալուածների անարգ յափշտակութիւնը։ Ես չեմ յիշատակիլ Գոլիցինի առանձին առանձին, թէև նոյնպէս շատ բնորոշ քայլերն ու կարգադրութիւնները, որովհետև յիշատակած երեք կէտերի մէջ արդէն արտացոլում է նրա ամբողջ ոգին և սիստէմը։

1. Տեղացիներին պաշտօն չտալ — ահա այդ երեք բառերի մէջ է ամփոփուած նոր „քաղաքականութիւնը“։ Այդ քաղաքականութեան շնորհիւ էր, որ իշխան Ամիլախվարի, ազգով վրացի, հրամանատար զօրաբանակի, Կովկասեան զինուորականութեան

փայլուն մի ներկայացուցիչ, որ մի քանի ամիս մինչև Գոլիցինի գալը՝ վարեց Նոյնիսկ կառավարչապետի պաշտօնը, անտես արուեց, և նրա տեղ կառավարչապետի օգնական նշանակուեց գեներալ Ֆրէզէ։ Դա ընդհանուր զարմանք առաջ բերեց, որովհետև հասարակ „տակտը“, եթէ աւելի չասենք, պահանջում էր յարգել տեղացի մի այնպիսի պաշտօնեայի, որ ռուսաց յաղթութիւնների համար մազեր է ճերմակացրել։ Դրա փոխարէն, վիրաւորանքը կրկնապատկելու համար, իշխան Ամիլախվարիին նշանակեցին իշխան Գոլիցինի „առանձին յանձնարարութիւնների“ պաշտօնեայ, մոռանալով, որ տարիներ առաջ՝ Նոյն այդ Գոլիցին ծառայել է իբրև... աննշան զինուորական Ամիլախվարիի ձեռքի տակ, երբ նա բանակ էր կառավարում...

Ես արդէն յիշատակեցի իշխան Շէրվաշիձէի հեռացուելը։ Նրա հեռանալուց յետոյ անմիջապէս հեռացրուեց նաև Գանձակի նահանգապետ իշխան Նակաշիձէ, որպէս զի դրանց փոխարէն „ռուսներ“ նշանակուեն։ Եւ ահա Շէրվաշիձէի տեղ նշանակուեց Բրկով, որին — լաւ լսեցէք — այժմ Նոյնիսկ Գոլիցինը տեսնել չի ուզում, իսկ Նակաշիձէի տեղ Մոսկուայից հրաւիրուեց ինչ որ գեներալ Կիրէեվ, որի միակ արժանաւորութիւնն այն է, որ Գոլիցինի անձնական բարեկամն է (միմեանց հետ „դու“-ով են), և որը մի ամսում արդէն ցոյց տուեց, որ այլ բան է Մոսկուայի „տրակտիրներում“ լաւ „յաճախորդ“ լինել, և այլ բան լաւ „նահանգապետ“... Այդ կարևոր փոփոխութիւններին յաջորդեցին աւելի աննշանները, սկսած գաւառապետներից և վերջացրած պրիստաւներով։ Հայերի մասին ասելը արդէն աւելորդ է. նրանք առանց դրան էլ „բարձր“ պաշտօնների համար անյարմար էին դատուած՝ և իբրև քաղաքականապէս անվստահելի տարր՝ սկսեցին հեռացուել նոյն իսկ իրենց երկրորդական պաշտօններից։ Իշխան Գոլիցինի կարգադրութեամբ, արդէն պաշտօնի մէջ եղած հայերին տեղեր էին առաջարկում կամ Ռուսաստանի ներքին նահանգներում կամ այնպիսի վայրերում, ուր հայեր չեն ապրում, իսկ նորերին բացարձակապէս մերժում են ընդունել։ Երևի դրանով պիտի իրագործուէր այն մեծադղորդ ֆրազը՝ թէ „իր համար չկայ ազգերի և կրօնների խտրութիւն“։

Հազիւ մի քանի ամիս անցաւ սակայն և Գանձակի նահանգի մէջ տեղի ունեցած դառն փաստերը ցոյց տուեցին, որ շատ վտանգաւոր գործ է պաշտօնի կանչել երկրին և ժողովրդին անծանօթ, ոչինչ արժանիք չունեցող անձինք և հեռացնել այնպիսի տեղացիներին, որոնք ամբողջ գլխով բարձր են զանազան „գեներալներից“ և „տայնի սօվետնիկներից“։ Աւազակութիւնը միանգամից կրկնապատկեց իր ուժը. „ռուս չինովնիկների“ „խամութեան“ վրայ վստահ՝ թուրք աւազակապետները սկսեցին սպանել ոչ միայն „անզէն հպատակներին“, այլև կօզակներով շրջապատուած պրիստաւներին, որոնց կենդանի ապացոյց պէտք է համարել Մօնաստիրսկու և Աբաշիձէի սպանութիւնը։ Աւազակային խմբերը յանդգնաբար սկսեցին կողոպտել ո՛չ միայն մուտ ճանապարհների վրայ, այլ նոյն իսկ նահանգական քաղաքի դիմաց, նահանգապետի քթի տակ, ինչպէս այդ ցոյց է տալիս Հաշիքէնդի հռչակաւոր դէպքը, երբ աւազակները կալանաւորեցին ոստիկանապետին, պրիստաւին, ռուս օֆիցերին (սպայ) և բազմաթիւ այլ մարդիկ, ու մտադիր էին ձերբակալել նոյնիսկ նահանգապետ գեներալ Կիրէեվին իբրև խոստովանք նրա մեծ քաջութեան... Այժմ մինչև իսկ ինքը գեներալ Կիրէեվը, յուսահատուած, առաջարկ է արել իշխան Գոլիցինին մի քանի հայերի պաշտօն տալ ոստիկանութեան մէջ. „Ինչքան ռուսներ բերեցինք, բոլորն էլ արքեցող դուրս եկան — ասել է նա — իսկ թուրքերը աւելի մեր ոտի տակն են փորում, քան գործ շինում. ուրիշ ելք չկայ, բայց եթէ տեղացիներին նորից պաշտօնի կանչել“։ — Ոչ և ո՛չ լսել անգամ չեմ կարող հայերի մասին, — ահա այս է եղել Գոլիցինի պատասխանը։ Նա մինչև այժմ էլ՝ չխրատուած փաստերից՝ կանչում է այս կամ այն դիւանատան կամ վարչութեան ղեկավարին և յայտնում. „Ձեզ մօտ մի քանի հայեր կան, պէտք է նրանց ուղարկել ներքին նահանգները կամ բոլորովին հեռացնել“. և եթէ որ և է մէկը փորձում է ապացուցանել, թէ այդ հայերը արժանաւոր պաշտօնեաներ են... իսկոյն թնդում է իշխանական որոտը՝ „Անել, ինչպէս ասացի...“ Յիշենք այդպիսի դէպքերից Թիֆլիզի „կօնտրօլնիյ պալատի“ կառավարիչ Վերետեննիկովի դէպքը, որ ստիպուեց ֆինանսների մինիստրին խնդրել՝ կամ տեղափոխել իրեն Կովկասից Ռուսաստան կամ ընդունել իր հրաժարականը, ասելով՝ թէ նա չէ կարող Գոլիցինի պահանջմամբ հեռացնել իր հայ պաշտօնեաներին...

2. Թիֆլիզի քաղաքային դումայի (խորհրդարանի) դէպքը գալիս է լրացնելու տեղացիների դէմ սկսուած պատերազմը։ Հիմնուած լինելով ընտրողական օրէնքի վրայ, բնականաբար, քաղաքային դումաներում մեծամասնութիւնը պէտք է լինի տեղացի ազգաբնակութեան ներկայացուցիչ և ոչ թէ ռուսների, որոնք ինչպէս գիտէք Անդրկովկասում՝ չնչին տոկոս են կազմում։ Մոռանալով ահա այդ բնական երևոյթը, իշխան Գոլիցին իր „քաղաքագէտ“ խորհրդականներով միշտ մտնչում է, թէ „դա ռուսաց դումա չէ, այլ հայոց դումա“։ Եւ ահա կամենալով չքացնել դումաների անկախ գործունէութիւնը՝ Գոլիցին, համարձակութիւն առած իրեն տուած արտօնութիւններից, ամէն քայլափոխում խառնւում է դումայի գործերում, ոչնչացնում նրա որոշումները, ինքագլուխ հրահանգներ տալիս նրան... Ահա մի փաստ։ Թիֆլիզի դուման որոշում է մի հասարակ բան—իր ձեռքն առնել քաղաքի ձիաքարշը, որ կապալով է տուած մի բէլգիական ընկերութեան։ Աւելի պարզ բան լինել էլ չէ կարող։ Դուման քաղաքի տնտեսական գործերի ղեկավարն է և շատ բնական է, երբ նա ձգտում է իր ձիաքարշը աւելի շահաւէտ և բնակիչների համար աւելի յարմար կերպով բանեցնել։ Բայց ահա „ռուս հայրենասէրները“ շշնջում են իրար ականջի, թէ „դուման ուզում է ձիաքարշը ձեռք գցել, որպէսզի այնտեղ էլ բոլոր պաշտօնները հայերին տայ“։ Ինտրիգը լարուած է, մնում է տեսնել արդիւնքը։ Իսկ արդիւնքը այն եղաւ, որ Թիֆլիզի նահանգապետ Բրկով և փոխ-նահանգապետ Ստեփանովիչ՝ արտօնուած Գոլիցինի կողմից՝ սկսեցին մէկը միւսի յետևից ջլատել դումայի իրաւունքները, քանդել նրա որոշումները, նոյնիսկ սկսեցին սիրտ տալ բէլգիական ընկերութեան, վերջապէս այնտեղ հասցրին, որ կարողացան՝ Գոլիցինի գրութեամբ՝ քաղաքային վարչութեան երկու անդամներին հեռացնել պաշտօնից և ինչ խօսք, տապալեցին ձիաքարշի յետգնման գործը։ Եւ այժմ

գոյութիւն չունի դուման. նա կառավարչապետի և մինչև իսկ նահանգապետի խաղալիքն է... Թիֆլիզում այդ առթիւ ամէն տեսակ տգեղ լուրեր էին պտտում, — իբր թէ նահանգապետ և փոխ-նահանգապետը 15 հազար ռուբլի կաշառք են կերել բելգիական ընկերութիւնից, որպէս զի քանդեն դումայի որոշումը։ Այդ լուրերի մասին գիտէր և ինքը Գոլիցինը, բայց հայերին պատժելու համար „ռուս չինովնիկները" երևի ապօրինի չեն գտնում և կաշառակերութիւնը...

Դրանով սակայն չվերջացաւ պատմութիւնը. մի պատմութիւնից ծագեց մի այլ պատմութիւն։ Հաւատացնում են, թէ Թիֆլիզի դատաստանական պալատի աւագ պրոկուրոր Վասիլեվ անմիջապէս հեռագրում է արդարադատութեան մինիստրին, թէ կովկասեան կառավարչապետը „իրաւունք չուներ հեռացնելու ուպրավայի անդամներին և նրա այդ վարմունքը ապօրինի է"։ Հարւածը խիստ էր, որովհետև Վասիլեվ հայ չէր, որ կարելի լինէր հեշտութեամբ լռեցնել։ Իշխան Գոլիցին նեղն էր ընկել։ Եւ ահա մի օր նա կանչել է տալիս դատաստանական պալատի աւագ նախագահ Վրասսկուն, որպէս զի ստիպի ոչնչացնել այդ բողոքը։ Ասում են, թէ նոր էր սեղեակը մտել Վրասսկին, որ Գոլիցին բաւական անքաղաքավարի կերպով սկսում է գոռալ, նկատողութիւններ անել։ Նախագահ Վրասսկին շատ սառն կերպով նկատում է.„Ձերդ պայծառափայլութիւն, ես ձեր ստորադրեալը չեմ և բոլորովին ցանկութիւն չունեմ վիրաւորանքներ կրելու"... Ասելով այդ խօսքերը նա անմիջապէս դուրս է գնում և, ինչպէս հաւատացնում են տեղեակ անձինք, անմիջապէս հեռագրով գանգատ է ուղարկում մինիստրին իր կրած վիրաւորանքի համար։ Իշխան-կառավարչապետը միւս օրն է միայն զգում, որ գործը սուր կերպարանք է ստանում. նորից իր մօտ է հրաւիրում Վրասսկուն և ներողութիւն խնդրելով առաջարկում մի կերպ ոչնչացնել պրոկուրորի բողոքը։ „Մեր գործը ընդհանուր է — ասում է նա — մենք ընդհանուր ուժերով պիտի կուենք տեղական թշնամի տարրերի դէմ և այդ պատճառով ես կը ցանկանայի, որ դատաստանական իշխանութիւնը իմ դէմ չգնայ"։ Նախագահ Վրասսկին հասկացնել է տալիս կառավարչապետին, թէ դատաստանական պալատի աւագ պրոկուրորը անկախ իշխանութիւն է, և այսօր բողոք տալով կառավարչապետի որ և է քայլի դէմ, վաղը կարող է բողոք տալ նոյնիսկ իր, դատաստանական պալատի նախագահի դէմ, և ապա ուրեմն ինքը անկարող է որ և է արգելք դնել... Ինչ եղաւ վերջը — չգիտեմ. այսքանը միայն յայտնի է, որ կառավարչապետի կարգադրութիւնը ուպրավայի երկու անդամների վերաբերմամբ չքանդուեց և ուրեմն այս անգամ էլ նա յաղթեց։ [1])

Տեսնում էք ուրեմն, որ տեղական տարրերը և յատկապէս հայերին յետ մղելու համար Գոլիցինի քաղաքականութիւնը ոչ մի միջոցի առաջ խորութիւն չի դնում։ Բայց այդ դառն ճշմարտութիւնը ապացուցանելու համար ինձ դեռ հարկաւոր է կանգ առնել երրորդ փաստի, այն է հայոց դպրոցների փակման և նրանց կալւածների յափշտակման վրայ, որ տեղի ունեցաւ այնքան վայրենի, այնքան անամօթ կերպով. հակառակ ամէն արդարութեան և օրինականութեան, մանաւանդ կալւածների խլելը, որ ցասումն է առաջ բերել զուտ ռուսական շրջաններում իսկ։ „Դա բացարձակ յափշտակութիւն է", բացականչում են ամէնքը, լսելով դպրոցների փակման և նրանց գոյքերը գրաւելու սրտաճմլիկ պատմութիւնը։ Սակայն, ներեցէք ինձ, որ ես այդ մասը կը թողնեմ մի առանձին թղթակցութեան, զգալով, որ այս նամակը բաւական երկարացաւ...

Է. ԱԿՆՈՒՆԻ

1) Լսեցի, որ Թիֆլիզի դատաստանական պալատի նախագահ Վրասսկի եւ պրոկուրոր (դատախազ) Վասիլեվ կանչուած են այստեղ։ Եթէ այս գործի համար է, շատ հետաքրքրական է, թէ ինչ վախճան կունենայ։ Սպասենք։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻՈՅ ՇՈՒՐՋԸ

Քիչ մը ուշ թէեւ։

Գերմանիոյ կայսեր Պոլիս այցին, Պերլինի բողոքական եբէց մը, Նաումանն, Ափրիկէի գերեվարներուն կարաւանը հետապնդող վիշտաւորներու պէս, շրջիկ կայսեր ընկերացած էր. գուցէ իր աղօթքներով, իր վեհապետին փորձութիւնները բարեխօսելու համար։

Պերլին վերադարձին, բարեմիտ երէցը „Օգնութիւն" անուն կրօնաթերթին մէջ հայութեան պատիւը ցեխոտող կոշը կոշը յօդուած մը կը հրատարակէ։ Այդ յօդուածին խօսքերը պ. երէցը քաղած է 19 տարիէ իվեր Թիւրքիա ապրող գերմանացի բրուտէ մը։ Ահա այդ յօդուածին գլխաւոր կէտերը։

„Թիւրքերը օխ ըրին հայերուն, որոնք անխղճօրէն կը շահագործեն անոնց (թիւրքերուն) հեղգութիւնը, անշահախնդրութիւնը եւ թերհոգութիւնը։ Հայը ամէնէն անպիտան հպատակն է. ան կը ծախէ իր կինը, իր դեռատի աղջիկը, կը սօթտէ նոյնիսկ իր եղբայրը... Անատոլուի հայերն ալ վաշխառու են... գերմանացի բրիստոնեաները զուր հայ տղաքներ կը պահեն, անոնք ալ մէկներուն պէս հանածներ պիտի ըլլան։ Հայերուն դէմ ինքնապաշտպանութեան օրինական միջոց չկայ. թիւրքը արդար պաշտպանութիւնով կը շարժի եւ այլն։"

Ինչպէս կը տեսնենք, բրուտը՝ լեզուն բերնին մէջ դարձող մարդ է. իր խօսքերը արդարեղի տեղ կրնան անցնիլ գերմանական արքունիքին մէջ։ Ուրիշները աղարտելով առաջ անցնելու ռազմութիւնը գերմանական հում բարոյականութիւնը կը բնայ ծրագրել միայն, մանաւանդ հայոց նկատմամբ։ „Արեւելքի մէջ ուր երթանք, Պոլիս, Եգիպտոս, ըսած էր Պոլսի գերմանական դեսպաններէն մէկը, հայերը մեր քաղաքականութեան միակ դիմադրուժերն են"։ Կ'ակնարկէր հայ պետական մարդոց, որոնք գերմանական ոտնձգութիւններուն արգելք կը ջանային ըլլալ։

Երանելի բրուտը պէտք ունէր արդէն իր երախտագիտութեան ապացոյցը տալու օսմանեան հիւրասէր երկրին — այն պահուն երբ խաղաղ դանիացիները գերմաններու հողէն այնքան տեւտօնեան կատաղով մը կ'արտաքսուէին — քանի որ օսմանեան ֆէլէկը իր դժբախտ ճռինչները լսելի ըրած ատեն, գերմանական բախտաւոր դուրգը իր կուժերը կը պատրաստէր։

Բայց՝ բրուտը այնքան հետաքրքիր չէ որքան Նաումանը, Վրօնով դղումցած գլուխ մը որ ազգի մը դարաւոր արժանապատուութիւնը սեւցնելու մոլեռանդ առաջվազութիւնը ցոյց կուտայ։

Ատուածային երէցը, իրենց բրուտին ցեխէ ճառը արտասպելէ առաջ, թող անգամ մը Պոլիս ման զար, դիտէր — բայց ոչ գերմանական զրպարտիչ ակնոցներով — հոն պիտի տեսնէր որ հայը Պոլսի շէնցնող ու զեղազարդող միտքն ու գործունէութիւնը եղած է. այն տեսակ լեշի ու փուտ երկրի մը մէջ անթիւ չկամութիւններու ու խստութիւններու դէմ, եւրոպական ճաշակը, զաղափարները ցոյց ընած է։ Դուցէ, այն ատեն, պ. երէցը աւելի խղճահարէր զրելու թէ „հայերը անպիտան հպատակներ են եւ թէ Պոլիսը բարոյապէս պչկուած է անոնցմով։"

Ո՞վ կը շահագործէ Թիւրքիան, գերմաննե՞ր, որոնք գողնաթաքոյց կազմակերպութեան մը պէս կը ծծեն երկիրը անոր տարստութեան առուները դէպի Գերմանիա վազցնելով, թէ հայերը որոնք 500 տարիներէ իվեր կը տոժվին, կը տանջուին եւ նրանց կալւածների յափշտակման վրայ, որ տեղի ունեցաւ այնքան վայրենի, այնքան անամօթ կերպով. հակառակ ամէն արդարութեան և օրինականութեան, մանաւանդ կալւածների խլելը, որ ցասումն է առաջ բերել զուտ ռուսական շրջաններում իսկ։ „Դա բացարձակ յափշտակութիւն է", բացականչում են ամէնքը, լսելով դպրոցների փակման և նրանց գոյքերը գրաւելու սրտաճմլիկ պատմութիւնը։ Սակայն, ներեցէք ինձ, որ ես այդ մասը կը թողնեմ մի առանձին թղթակցութեան, զգալով, որ այս նամակը բաւական երկարացաւ...

Է. ԱԿՆՈՒՆԻ

իրենց նիւթական ու բարոյական քրտինքը ու աչքի լոյսը թափելով սուլթաններու ապերախտ աշխարհին մէջ:

Ամօթ չէ՞, որ աշխատութեան երկրի մը մէջ ապրող երէց մը հայ ազգին աշխատասիրութիւնը եւ ճարպիկութիւնը գողութիւն սեպէ, չտեսնում ընելով աչքծակութիւնները իր վեհապետին ու վեհապետուհիին, որոնք սուլթանէն բերնովին պախշիշ ուզելու չափ հ ո գ ի ի խ ո յ ա ն ք ը ունեցան:

Ահա գերմանական բարեկամութեան վարդագոյն արշալոյսը:

Իսկ հայերուն իրենց կնիկներն ու աղջիկները ծախելու վարդապետութիւնը՝ նոր հերքում մըն է այն ասութեան թէ „արեւին տակ նոր բան չկայ:“

Եթէ հովուել երէցը կայսերական չուքէն դուրս ելլէր պահ մը եւ մարդկային դժբախտութիւններով ալ հետաքրքրուէր — ոչ միայն կայսրերու պղտոր հոգիներով — պիտի տեսնէր որ հայ կիները կոտորածի ատեն առաքինութեան ամէնէն դիւցազնական ապացոյցները տուած են, անձնասպանութիւնը անարգ գերութենէ մը վեր դասելով:

Հայ ընտանեկան պատիւը Նաումաններու ու բրուտներու չըպղուքներով չ՚աղտոտիր: Բայց, աւելի քրիստոնէական չէ՞ր ըլլար որ պ. Նաումանը, Թիւրք պետութեան յիմար եւ անօգուտ հեշտանք մը պատճառելու տեղ, իր մօրը աչքերը վար քաշէր եթերային պարապութենէն, ու ժուռ ածէր գերմանական մթութեան մէջ ուրւագծուող տժգոյն... առաքինութեան վրայ:

Հակառակ տասնաբանեայ „մի շնար“-ին, խարտեաշ գերմանուհիներէն շատերն իրենց զգայապաշտութիւնը կը ծաւալեն գերմանական աշխարհէն դուրս, նոյնիսկ, ինչպէս կը վկայեն, հարեմներու մէջ զաղթականութիւններ կը հիմնեն, առանց զոնէ Թանհաուզէրի պէս ք ր ի ս տ ո ն է ա յ հայրենիքի կարօտը զգալու...

* * *

Նաումանի հայազրպարտ գրածը պատրուակ բռնելով Պօլսի ֆրանսերէն „Սէրվէթ“ լրագիրը „Հայերը“ վերնագրով հաշտողը յօդուած մը հրատարակած էր, թէ իբր հերքում գերման երէցին եւ թէ հայերը սիրաշահելու փորձառար մը:

Թրքական աղտաղտուկ ու խաւարակուռ մամուլին մէջ, „Սէրվէթ“-ի փաղաքշանքները առեղծուածային ու շփացած բան մը ունին:

Նախ՝ կըզգաս թէ խղճի խայթի սարսուռ մը կ՚անցնի հոն. բայց այդ զգայութիւնը ծծուած համհոտ մը կը ձգէ, երբ ուշով կարդանք այդ գիշերաշխին գրուածը, որ արդարութեան թեւակոտոր թափահարութիւններով անցեալը քօղելու եւ արիւնի հեղինակները աստուածացնելու փախստի հովերը կ՚առնէ:

„Երէցները, կ՚ըսէ „Սէրվէթ“, իբրեւ Աստուծոյ պաշտօնեայ ատելութիւնը մարելու ու խաղաղութիւնը թագաւորեցնելու պէտք է ծառայեն... բայց Նաումանի իր անժամանակ ու անտեղի հրապարակութիւնով կուզայ պղտորութիւն ձգել այնքան բարեբախտօրէն ու շուտօրէն համաձայնութիւն կայացած ժողովուրդի մը տարրերուն միջեւ, շնորհիւ վարչական վեհ բարեխառնութիւններուն անոր (սուլթանին), որ օսմանեան ազգին գլուխը կենալով այնքան իմաստուն կերպով կը վարէ զայն խաղաղ յառաջդիմութեան ճամբուն մէջ“:

Կը տեսնենք թէ Թիւրք գրողները ինքզինքնին ալ կը գերազանցեն երբ խնդիրը սուլթանին ներբողին վրայ է, ըլլայ ան ոճրագործ կամ մեծագործ: Վերի խօսքերը օսմանեան մամուլին մարգրիտներն են:

Ցետոյ՝ պատասխանելով թէ ո՛չ հայերը եւ ո՛չ թիւրքերը արժանի են Նաումանի պարսաւանքին, կ՚աւելցնէ. „Հայ ժողովուրդին իր վեհապետին համար անձնուիրութիւնն ու օրինապահութիւնը բնաւ չ՚այլայլիր“. Թուրքերը բնաւ յոռետես եղած չեն. տունեփին էրի, նորէն խաղ կը կանչեն... խղունջի պէս:

„Սէրվէթ“ Նաումանին երկու քերան խօսք ըսելէ վերջ, կ՚անցնի իր բուն մտադրութեան, օսմանեան միաձոյլ կայսրութեան մը լռելեայն հրաւէրը կ՚ընէ բոլոր օսմանեան հպատակներուն, մանաւանդ հայերուն, որպէս զի անցածը մոռնալով, իրենց փատիշահին մեղայ ըսեն ու անոր ոտքերը լզեն, եւ իր բարոյախօսութեան իբր պատգամ կ՚աւելցնէ. „ուժեղ եւ վեհանձն ազգ մը (Թիւրքերը) կ՚արհամարհէ ոխն ու ատելութիւնը.“

Օհ...

Երկրի մը մէջ ուր ա տ ա լ է թ բառը ր է զ ա լ է թ տխուր, բայց բնորոշ ծաղրանունը առած է, արդարութեան ամէն բացականչութիւն պժգանքի ու արհամարհանքի արձագանգ մը միայն կրնայ ունենալ:

Զուր տեղը „Սէրվէթ“ արիւնային շեփորները կը ջանայ քնարի վերածել եւ համբաւի թեւերով իր վեհապետին վեհ շնորհները պատմել աշխարհի չորս հովերուն... Ի՛նչ այլասերում անհատի մը կամ պետութեան մը համար, երբ այլեւս ինքնախաբէութեան մէջ կ՚ուզէ մոռնալ իր ցաւերն ու վիշտերը, առանց մատը վէրքին վրայ դնելու, կամ կը հեգնէ ինքզինքը սրտաշարժ անգիտակցութիւնով մը:

Հայերը, կ՚աւելցնէ „Սէրվէթ“ վստահ շեշտով մը, դրսէն եկած ձայներուն չլսում կ՚ընեն ու պիտի շարունակեն աշխատիլ երկրին բարգաւաճման. եւ կը խոստովանի թէ հայերուն պէս օգտաւէտ տարր մը, որ մեծամեծ ծառայութիւններ մատուցած է, յիմարութիւն պիտի ըլլար վանել:

Այս անսպասելի եւ դժկամ գիտակցութիւնը օսմանեան ամբարտաւան խաւարամտութեան վրայ չնչին գոհացում մըն է մեզի համար: Թիւրքերը վերջապէս կըզգան թէ հայերը բարոյական մեծ ուժ մը են երկրին: „Սէրվէթ“-ի բռնի համեստութիւնը հերիք չէ սակայն հարիւր հազարաւոր անմեղներու կսկիծը փարատելու, զորս յաւիտենապէս Թիւրքերը վանեցին իրենց ծոցէն:

„Սէրվէթ“-ի խմբագրութիւնը իր գրածին լրջութեան, կ՚ըսես, ինքն ալ չի հաւատար. մտիկ ըրէք սա փ է ր ո ւ շ ա ն գրուածին, որ իր յօդուածին մասը կը պատճառէ. „Օսմանեան օրէնսդրութեան մէջ յանցաւորը իր պատիժը կըստանայ եւ մեղսակիցները անոր հետ կը պատժւին...„ թէ իրենց վեհապետը արդարութեան օրինակը կուտայ եղեր ամէն օր...

Մարդուն արիւնը դարձնելու չափ ուժով զաւեշտ մը: Աւելի պայծառ ընելու համար „Սէրվէթ“-ի միտքը, աւելցնենք սա լրբերեւ հրաւէրը Եւրոպային որ գայ եւ տեսնէ թէ ինչպէս „բոլոր օսմանցիները իրենց վեհապետին վերածնութեան մղումին տակ կ՚ապրին, նման չտեսնուած երջանիկ ներդաշնակութեամբ“:

Մեզի կը մնայ մայիլ ըլլալ այս շքնաղ իմացականութեան առջեւ: Բայց չէ՞ որ Թիւրք գրագէտները սէրն ու սոխակը երգելու աւելի կոչում ունին: Ինչո՞ւ այդ բնաշեղումը:

Կար ատեն մը — երազ օրերն էին Թիւրքիոյ — ուր Թիւրքիոյ կոյր բախտը ծնաւ քանի մը սրտցաւ փաշաներ, որոնք անկեղծօրէն կ՚ուզէին Թիւրքիան վեր հանել իր ճահիճէն: Այդ սերունդը անցաւ եւ տեղերնին պամպարայ մնաց: Այժմ աւազակներ եւ ոճրագործներ կան միայն: Այդ իմաստուն փաշաներէն մէկն էր Ռաշիտ փաշան, որ առանց յաւակնութեան Եւրոպային „Գիտեմ, կ՚ըսէր, իմ կառավարութիւնս անզօր է, բայց կը ջանամ որ աւելի գէշ չկառավարէ“:

Եթէ ողջ ըլլար այդ առասպելային փաշան եւ տեսնէր որ „Սէրվէթ“-ը դժոխքը արքայութիւն կ՚ընէ, Հ ա մ ի տ է լ Գ ա թ ի լ ը՝ Հ ա մ ի տ է լ Ռ ա շ ի տ, հաւանօրէն պիտի ըսէր. „Գիտեմ որ իմ պետութիւնս անպիտան է, բայց յոյս չկայ մարդ ըլլալու“:

„Սէրվէթ“-ի կանխահաճութիւնները, թատերային շարժումները չեն շլացներ մեզ. դողսիրտ նախազգացում մը՝ Նեսոսի պատմուճանին ներքեւ կ՚էրէ կը լափէ զինքը: Եթէ Թիւրքիոյ չարատանջ երազները չըլլային... „Սէրվէթ“-ը ընկուզի կեղեւին մէջ արեան գետեր կը վազցնէր:

Հայը — որ ընդունակ էր Թիւրքիան ծլեցնելու եթէ արեւելեան մեռելութեան չքաշէր — „Սէրվէթ“-ի մոգական գրիչով շուտ չի մոռնար իր վէրքերը, որոնք դեռ թաց են, եւ ո՛չ ալ Թիւրքիան շատ հեշտութեամբ կրնայ զօդել այն անթիւ ազգութիւնները, որոնք շատոնց իր ոլորտէն դուրս նետուած են: „Բաժանեցէք որ տիրէք“, ի՛նչու համերաշխութիւն կը քարոզէք:

Խեղճ „Սէրվէթ“, լէշ կերցուցէք ձեր վեհապետին որ շատ շատ ապրի:

Որքան կ՚ուզէ, Թահիր պէյը աստղերը թող բարձրացնէ իր կառավարութիւնը եւ անուշիկ վեհապետը: Բայց աւելի դիւթիչ չէ՞ ձգել զանոնք իրենց արեան լուսապսակովը փառաւորուած:

Այսպէս աւելի իմաստալից են:

* * *

Խղճագէտ պատրիարքը „Սէրվէթ“-ի գրածէն խելայեղ՝ շնորհակալութիւն մը խրկեր է թերթին խմբագրին: Հակառակ ջըղային դրութեան ճարպացման, ատեն ատեն Օրմանեան արեւելեան նուրբ զգայնոտութեան մը ապացոյցը կուտայ:

„Սէրվէթ“-ի խմբագիրը, որուն մուսան այնքան համեստօրէն Եըլտըզի թաւուտներուն մէջ կը մնաշրջի, հայոց սարսափներուն ատեն իր „Մ ա լ ի ւ մ ա թ“ եւ իբր թէ արտասահման հրատարակուող „Ղ ա յ ր է թ“ լրագրերով, անարգանք եւ վատութիւն չմնաց որ չթափէր հայ ազգին գլխուն. եւ հիմա այդ միսիւլման մոլեռանդութեան կամ համիսլամութեան տխուր առաքեալը, մէկէն խաղաղութեան դափնին կը ցցնէ հայոց ու իր փլփլած մինարէին վրայէն շպարուած ու շնթող պատգամներ կը թափթփէ բերնէն:

Օրմանեանը իր անշահ շնորհագրով ապացուց թէ մենք Թիւրքիոյ դժբախտ գերիներն ենք, եւ թէ մինչեւ մեռնիս ծռած միշտ պիտի լզենք մեզի արգահատանքի կամ գովութեան բառ մը ըսողներուն ոտքերը: 600 տարի է Թիւրքիոյ վաստկուրները ըլլանք ու մեր արժանիքի գնահատութիւնը մուրացիկ զարմանքով մը լեցնէ մեզ... որ նոյնիսկ ազգի մը պետը խոնարհ ծառայի մը պաշտօնաձեւը առնելով, „Սէրվէթ“-ի շինած լակը ու-

տելու չափ նուաստանայ: Եթէ պատրիարքը իր շնորհակալութիւնով կ'ուզէր կաշառել „Սէրվէթ"-ը, որուն գրածը չխպնող զովեստ մըն է Մեծ Մարդասպանի հասցէին, եւ հետեւապէս հիմկու ռէժիմի տեւութեան, ծիծաղելի եւ գձուձ խաղ մըն է: Շորհկութիւնը մէկդի, պատրիարքը որոշ ուղղութիւն մը եւ արդար կուսան մը ունենալու է հողաթափներուն տակ: „Սէրվէթ"-ը կըզգայ թէ Թիւրքիան հող կը հոտի: Իրաւ է, Օրմանեանէն յիմարութիւն է պահանջել վերջին օծումը, այլ գոնէ քիչ մը անձնապատուութիւն անհրաժեշտ է:

Պատրիարքարանը թագաւորին արեւուն համար աղօթողներու — եւ մոլլաներէն շատ են — օճախն է: Երբ բարեմաղթութեան օրեր գան Գուրգէնը, իբրեւ ազգային մանտարէն, պաշտօնին գլուխն է. „իդէպ ժամու" կուգայ ազգին երախտագիտութիւնն ու անհուն ուրախութիւնը յայտնել „յոտս նորին վեհափառութեան": „Զէն չէին վասն չէին յաշտ անէ" սրամիտ բացատրութիւնով:

Ցաւագա՜ր պատրիարք, որ միշտ կ'ուզէ կատուի պէս չորս ոտքի վրայ իյնալ, ու գերերջանիկ աղաներ: Մեր պատրիարքը հրէի մէթօտը բռնած է. մուրալ գուրալ. ամէն թշնամանք մարսել եւ յետոյ ճապուկ լեզուով մը ըսել. „Ձեր սուրը մեր պարանոցը". չորրորդ դարու հայ կրօնական քաղաքականութեան հետեւելով. թէեւ, ըսողներ կան որ Օրմանեան, սրանուրբ հեգնութիւն մըն ալ կը դնէ իր փորսող նուաստութեանը մէջ:

Խըմպը՜լ Օրմանեան:

ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱ ՆՈՒԲԱՐԵԱՆ

—

Լրագիրները հաղորդեցին արդէն Նուբար փաշայի մահը: Հանգուցեալը բաւական յայտնի մարդ էր. այդ հանգամանքը մեզ վրայ էլ պարտականութիւն է դնում յայտնել մեր կարծիքը նրա մասին:

Նուբար փաշան ծնւել է Իզմիրում 1825-ին: Նրա երկարատև գործունէութեան ասպարէզը եղել է Եգիպտոսը, ուր նա դեռ 20 տարեկան հասակում ազգակցական կապերի շնորհիւ սկսեց արդէն աչքի ընկնող պաշտօններ վարել և վերջապէս ժամանակի ընթացքում հասաւ նախարարի բարձր աստիճանին: Իր գործունէութեան ժամանակամիջոցում Նուբար փաշան հանգամանքների շնորհիւ մի քանի անգամ ստիպւած եղաւ թողնել պաշտօնը և հեռանալ Եւրոպա, իսկ 1895 թւից նա վերջնապէս հեռացաւ քաղաքական ասպարէզից և իր կեանքի վերջին տարիները անց կացրեց Պարիզում, ուր և վախճանւեց 74 տարեկան հասակում, թողնելով իր ժառանգին, լրագիրների ասելով, 150 միլլիոն ֆրանկի չափ կարողութիւն:

Այդ ահագին հարստութիւնը — մեզնից բոլորովին անկախ և նոյնիսկ մեր կամքին հակառակ — կարծես մի տեսակ ստւեր է ձգում հանգուցեալի յիշատակի վրայ, առաջ բերելով այն բնական հարցը թէ՝ ի՛նչպէս և ի՛նչ միջոցներով են կազմւում այդպիսի ահռելի հարստութիւններ: Սակայն դրա հետ միասին անուրանալի է, որ նա նւիրել է Եգիպտոսին իր բոլոր խելքը, միտքը, ընդունակութիւնները, երիտասարդութեան ամբողջ թարմութիւնը, չափահաս մարդու հըմտութիւնը, մի խօսքով՝ իր ամբողջ կեանքը, իր ամբողջ „ես"-ը: Եւ ահա այսօր նրա մարմինը ամենայն իրաւամբ յանձնւում է նոյն եգիպտական հողին, որը նա այնքան սիրում էր և որի յառաջադիմութեան ու բարգաւաճման պատմութեան մէջ անշուշտ նա մի շատ պատկառելի տեղ պիտի բռնի:

Մեր նպատակից բոլորովին դուրս է հետևել քայլ առ քայլ և արձանագրել այստեղ Նուբարի ամբողջ գործունէութիւնը Եգիպտոսում: Եւրոպական մամուլը ընդհանրապէս մեծ գովեստով է խօսում Նուբարի մասին, իսկ մի քանի լրագիրներ նրան դասում են մեր դարի առաջնակարգ քաղաքագէտների շարքը: Այդ գործունէութեան նայելով՝ իսկապէս Նուբար փաշան կանգնում է մեր առջև իր խոշոր հասակով, իբրև մի ուժեղ անձնաւորութիւն, օժտւած բազմակողմանի հարուստ ընդունակութիւններով:

Այդպէս է ահա Նուբար փաշան իբրև մի համաշխարհային քաղաքացի: Ով բաւականանում է այս տեսակէտով, նրա համար այլևս ասելիք չունենք: Բայց մենք չենք կարող մոռանալ, որ Նուբար փաշան ծագումով հայ էր ու հետևապէս պէտք է որոշ պարտականութիւններ ունենար դէպի իր ազգը, դէպի այն ժողովուրդը, որին նա պատիւ ունէր պատկանելու: Նրա ամբողջ գործունէութիւնը, որքան էլ բեղմնաւոր ու օգտաւէտ լինէր Եգիպտոսի համար, չի կարող այնուամենայնիւ բաւարարութիւն տալ՝ մանաւանդ ներկայ պարագաներում՝ հայկական կեանքի արդար պահանջներին, և հայ մարդը ցաւ պէտք է զգայ, որ այդ ուժեղ խելքը, նուրբ ու ճարպիկ քաղաքագիտական ձիրքը և առհասարակ այդ անպայման հարուստ ընդունակութիւնները ծառայել են բացառապէս Եգիպտոսի յառաջադիմութեան, նրա քաղաքական-կուլտուրական բարգաւաճման և բոլորովին անօգուտ են անցել հայկական կեանքի համար:

Այդ պակասի շնորհիւ Նուբարի պատկերի մէջ հայ չի երևում: Ծնւելով հայ՝ նա օտարութեան մէջ օտարներով շրջապատւած անցրեց իր կեանքը, նա իր համար նոր հայրենիք գտաւ, որ կլանեց նրա բոլոր ուժերը, նրա ամբողջ էութիւնը, մոռացնել տալով թշւառութեան ծայրը հասած բնական հայրենիքը: „Հայաստան երբեք եղած չէ, կամ այնքան քիչ, որ նշանակութիւն չունի, բայց հայ մի՛շտ եղած է, և մի՛շտ պիտի ըլլայ",—ահա՛ նրա ազգասիրական ամբողջ դաւանանքը: Զարմանալի չէ ուրեմն որ, երբ այդ հայութիւնից օտարացած մարդու վերջալոյսին տարօրինակ ուժգին կերպով բռնկեց յանկարծ հայկական կեանքը, հրապարակ հանելով մի շարք լուրջ ու ծանրակշիռ հարցեր, նա իր արդի դրութեան մէջ անկարող եղաւ հասկանալ ու բաւարարութիւն տալ նրանց: Մի վճռական քայլ էր հարկաւոր, մի համարձակ թռիչք՝ հայկական նորագոյն պատմութեան մէջ լաւագոյն էջերից մէկը գրաւելու համար, բայց նրա մէջ չկար, բացակայում էր ամպերի հետ խօսող Մովսէսը, վե՛ր-վե՛ր, դէպի երկինք սլացող հոգին... Ճիշդ է, եղան րոպէներ, երբ նրա մէջ էլ կարծես զարթնում էր ազգայնական զգացմունքը, բայց անմիջապէս այդ բարձր զգացմունքները մանր անձնական փառասիրական ձգտումների էին վերածւում ու հայկական աւերակների վրայով թռչող բարենորոգչի միտքը դէպի Նեղոսի ափերն էր ուղղւում...

Թերթելով հայկական շարժման վերջին 20 տարւայ պատմութիւնը, մենք մի քանի անգամ հանդիպում ենք Նուբար փաշայի անւան: Առաջին անգամ Նուբար փաշան հրապարակ եկաւ հայերիս համար Բերլինի վեհաժողովի ժամանակ: Ռուս-թիւրքական պատերազմը նոր էր վերջացել. ազատւած անկախ Բուլգարիայի կառավարչի հարցն էր զբաղեցնում քաղաքական աշխարհը:

Նուբարը, որ այդ ժամանակ Եգիպտոսից հեռացած Պարիզ էր ապրում, այդ պաշտօնի համար դրել էր իր թեկնածութիւնը և իբրև թեկնածու բնականաբար ջանքեր էր անում իր նպատակին հասնելու, և գուցէ հասնէր իսկ, բայց ռուս կառավարութիւնը ուրիշ մտքեր ունէր... Իշխան Գօրչակովի ասելով՝ հայ կառավարիչը, որքան էլ նա արժանաւոր լինէր, սլաւօններին չէր կարող բաւարարութիւն տալ... Նուբարի հաշիւները այդպիսով իդեալ ելան, բայց նրա համար միաժամանակ բացւում էր մի նոր ասպարէզ. Բուլգարիայում կառավարիչ լինելու յոյսը կորցնելուց յետոյ՝ Նուբարը սկսում է երազել նոյնպիսի պաշտօն ստանալ Հայաստանում. նրա երևակայութեան մէջ նոր նոր պատկերներ են առաջ գալիս. հայկական նահանգների կառավարչի դերը սկսում է կամաց-կամաց հրապուրել նրան, գրգռել նրա իշխանասիրական տխորժակը։ Եւ ահա նա պատրաստում է այդ նահանգների համար բարենորոգումների մի ծրագիր, ուղարկում է Բերլին հայ պատւիրակներին և խնդրում, որ „ազգի“ կողմից իրեն յանձնւի Բերլինի վեհաժողովում ներկայացուցիչ հանդիսանալ և այդ ծրագիրը պաշտպանել։ Սակայն Ներսէս Վարժապետեանը տարբեր մտքերով էր ապրում։ Ազատութեան փրկարար հողմն էր փչում. կրծքերը ուժգին կերպով բարձրանում, իջնում էին և Ներսէս իր մտաւոր աչքերի առաջ՝ եթէ ոչ անկախ Հայաստանի ուրուականն էր տեսնում, գոնէ երազում էր նա իր դժբախտ հայրենիքը անտանելի հարստահարութիւններից վերջապէս ազատ տեսնել։

Նուբարի ծրագիրը, որ Ներսէսի կարծիքով այն ժամանակւայ տենչանքների տեսակէտից շատ համեստ պէտք է համարւէր,—բնականաբար չէր կարող գոհացում տալ Ներսէսին։

Աւելորդ է արձանագրել այստեղ նոյնպէս L'Arménie թերթի այն տեղեկութիւնը, որին նայելով թիւրքամոլ Բիկօնսֆիլդը Նուբար փաշայի հետ հայկական բարենորոգումների մասին խորհրդակցելուց յետոյ՝ յայտարարում է լորդերի պալատում թէ „փոքր Ասիայի քրիստոնեաներին երջանկացնելու համար բաւական է բարենորոգել տաճկական դատարանները“։

Նուբարի այդ ոչ անմեղ միտքը, որ շատ թափանցիկ և պարզ կերպով միմիայն իր թեկնածութիւնը դնելն էր նշանակում, մեզ թւում է որ յամենայն դէպս կարող էր միմիայն վատ տեսակի ծառայութիւն անել հայկական դատի համար, մանաւանդ այնպիսի հրէշի ձեռքում, ինչպիսին Բիկօնսֆիլդն էր։

Անցան տարիներ... Մի ամբողջ ողբերգութիւն՝ մի քանի արարածներով՝ անցաւ հայի գլխով և երբ 1896 թւին հայկական նահանգների կառավարչի հարցը նորից ծագեց, լրագիրների մէջ Նուբարի անունը նորից երևան եկաւ և անցաւ...

Մենք բոլորովին միտք չունենք հերքելու, որ երբ ծայրէծայր ալէկոծւեց հայկական կեանքը ու մեր հայրենիքը պատմութեան մէջ չլսուած ու չտեսնուած դժբախտութիւնների ասպարէզ դարձաւ, փաշան էլ կարող էր ճնշող տպաւորութիւնների ենթարկւել, և ո՞վ է նա, որի սիրտը, որի միտքը չճնշւէր, չճմլւէր այդ ողբերգութեան ընթացքում, բայց այդ չհերքելով հանդերձ հարցնում՝ ենք՝ ի՞նչ արեց այդ տագնապալից ծանր ճգնաժամին քաղաքական աշխարհում բաւական կապեր ունեցող մեծանուն Նուբար փաշան, 150 միլլիոն ունեցող հայ փաշան. կատարե՞ց արդեօք նա իր պարտականութիւնները դէպի այն ազգը, այն ժողովուրդը, որին նա պատկանում էր, որի մի մասն էր կազմում և որը խեղդւում էր իր զաւակների արեան հեղեղներում։ Չէ՞. փոխանակ շանթաւածի պէս անմիջապէս հրապարակ նետւելու ու իր մեծ ընդունակութիւնները, վիթխարի կրողութիւնը ու հանրածանօթ անունը այս կամ այն ձևով մորթւած հայրենիքի մորթոտւած զաւակների օգտին ծառայեցնելու, փաշան... խոհեմաբար լռում է ու իր ամբողջ հայրենասիրութիւնը նրա մէջն է տեսնում, որ իր դուռը եկած մի խումբ „մուրացկանների“—իսկական մուրացկանների—նիւթական նպաստներ է տալիս ու նոցանից մի քանիսներին՝ իր հարուստ թևի տակ առնելով՝ նիւթականից զատ հոգևոր սնունդ էլ է մատակարարում... մեր նորագոյն պատմութեան առաքեալներին ոտնակոխ անելու չար դիտաւորութեամբ... Թող օտարազգի հասարակական կարծիքը, օտարազգի թերթերը գովեն, փառաբանեն Նուբարի անունը—ի՞նչ փոյթ. նրա հայի ցաւերը, հայի դարդերը չեն հասկանում և չեն էլ ուզում հասկանալ. բայց մեզ թւում է՝ սխալւած չենք լինի, եթէ ասենք, որ այդ մահը հայի համար ոչ մի կորուստ չէ, որ այդ մահի առթիւ հայ ազգը չի թափիլ և ոչ մի կաթիլ արցունք։

Հայ ծնւեց Նուբարը—օտար մեռաւ. մեծ կարող էր լինել—փոքր մեռաւ...

Ահա այն շարժառիթները, որոնց հիման վրայ մենք, հակառակ մեր հայ մամուլի ընդհանուր կարծիքին, պնդում ենք որ Նուբար փաշան ու նրա պէս մարդիկ հայ կեանքի վերաբերմամբ դրական երևոյթ չեն ու հետևապէս անարժան են ազգային ցաւակցութեան։ Եւ ինչ էլ ասեն—հայկական պանթէօնի զարդը՝ Ներսէս Վարժապետեաններ, Բաֆֆիներ ու նոյն ոգով, նոյն շաւղով գնացող յեղափոխական լաւագոյն տարրը—այդ վեհանուն, անանուն ինքնազոհները ը մնան. Նուբար փաշաներ և նրա պէս այլ „մեծանուն“ մարդիկ այնտեղ տեղ չունեն և չեն կարող ունենալ։ Անաչառ ու անկողմնապահ պատմութիւնը կշռելու միայն մի չափ ունի ամէնքի համար. Suum cuique։

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵԾ ՄԱՐԴԿԱՆՑ ՓՈՔՐԻԿ ԴԱՏԱԽԱԶԸ

(Շարունակութիւն N՝ 1-ի)

—

Թող չկարծւի, թէ մենք դէմ ենք խիստ քննադատութեան։

Ընդհակառակը։ Մենք ամէնաջերմ կուսակիցներ ենք լուրջ քննադատութեան, որովհետև ստեղծագործիչ գաղափարական հաւատից յետոյ տարրալուծող քննադատութիւնն է այն ոյժը, որով յեղափոխութիւնը կերպարանափոխել է, կերպարանափոխում է և պիտի կերպարանափոխի կեանքը ամէն տեղ։

Բայց հօ չի կարելի քննադատութիւն համարել ամէն մի յօդուած, որ հեղինակը բարեհաճել է այդպէս անուանել, և քննադատ՝ ամէն մէկին, որ մի գլուխ ունի ուսերի վրայ և երկու ձեռք, որոնցով կարող է՝

պ. Զօպանեանի նման՝ բռնել այդ գլուխը—„երկիւղածօրէն, անկեղծօրէն“ կամ՝ աւելի ճիշդ ասած՝ ամբարտաւանօրէն և փարիսեցիօրէն խորհրդածելու համար մեր նորագոյն պատմութեան ամենակարևոր հարցերի մասին։

Կրկնում ենք, մենք դէմ չենք խիստ քննադատութեան։ Մենք չենք ուզում կուռք դարձնել ոչ մի պատմական գործչի և տարօրինակ կը լինէր մեր կողմից պաշտպանել անսխալականութեան սկզբունքը որևէ մարդու վերաբերմամբ, բայց կարելի՞ է միթէ հերքել այնպիսի ճշմարտութիւններ, թէ Ներսէս Վարժապետեան, Բաֆֆի և ուրիշ նրանց նման գործիչներ բացել են մեր պատմութեան մէջ այնպիսի փառաւոր էջեր, որոնցից լաւը նա երբէք չի ունեցել և մարմնացրել են իրենց մէջ իղձեր, որոնք ամբողջ ազգի իղձերն են եղել. կարելի՞ է արդեօք չխոստովանել, թէ յեղափոխական կուսակցութիւնը ապրել է միշտ ժողովրդի ցաւերով, անթիւ մահեր է տուել նրա ապագայի համար և նրա ամենաստոր խաւերից հերոսներ է դուրս բերել ամենասուրբ գործի համար, որ երբ և իցէ ոգևորել է հայերին։

Եւ ահա երբ մի որ և է Զօպանեան աշխատում է հաւատացնել, թէ հայկական շարժումը, սկսած Ներսէս պատրիարքի՝ Բերլինի վեհաժողովին դիմելուց, վեթխարի սխալների և աններելի ոճիրների մի շարք է եղել, երբ նա յանդգնում է Ներսէս Վարժապետեանին տղայամիտ համարել, նրա համախոհներին ապուշ և Բաֆֆիին խենթ, երբ նա չի ամաչում ձգել յեղափոխականների երեսին այնպիսի մի հրէշային մեղադրանք, թէ հայկական ահռելի կոտորածների ժամանակ նրանք ոչ միայն ամենևին ցաւակցութիւն չէին զգում դէպի արեան մէջ լողացող ժողովուրդը, ոչ միայն ոչ մի բոպէ քունները չէին փախցրել, այլ և ուրախ էին, ժպտուն և զարթ, ցայտ, զ ո ւ ա ր թ“, — կարծում ենք, կատարեալ իրաւունք ունենք համարել նրա գրածները ոչ թէ լուրջ քննադատութիւն, այլ վայրահաջ պարսաւաբանութիւն, որի մասին ընթերցողին կարող է գաղափար տալ հետագայ օրինակը։

Խօսելով այն ճառի մասին, որ Ներսէս Վարժապետեան արտասանեց ազգային ժողովում Բերլինի վեհաժողովից յետոյ՝ պ. Զօպանեան ասում է.

«Կարելի չէ երեւակայել աւելի տղայական, աւելի ուռուցիկ, աւելի ցաւագին կերպով ծիծաղելի բան մը. պարզեւաբաշխութեան ճառ մըն է, մինչդեռ դամբանական մը պէտք էր»։

Այնուհետև իր խօսքերով հեգնօրէն բանաձևելով այդ ճառը, որ, ինչպէս ինքը խոստովանում է, ձեռքի տակ չունի, [1]) նա շարունակում է.

«Որպէս զի չբսուի պատմութեան մէջ թէ ամբողջ հայ ժողովուրդը ապուշ է, գտնուեցան երկու երեք անձեր, ժողովրդական կուսակցութիւնէն, որոնք այդ տխուր ժողովի մէջ սրատեսութիւնը եւ քաջութիւնը ունեցան այդ ճառին դէմ բողոքելու. այդ անձերը զգայուցին թէ Ներսէս ապօրինի ընթացք ունեցած էր իր ազգին ամէնէն կենսական գործը քանի մը էֆէնտիներու հետ միմիայնակը կատարելով, թէ պարզապէս գործիք եղած էր թիւրք կառավարութեան նպատակներուն, թէ փախցուցած էր թանկագին առիթ մը որուն պէս ազգերը քիչ անգամ կ'ունենան, եւ թէ բոլոր այդ դէպի Հայաստան հրաւէրը (Ներսէսի կողմից) ծաղրելի ստութիւն մըն էր։ Այդ անձերը իրաւունք ունէին» («Անահիտ», № 3, եր. 92)։

„Ստախօսների յիշողութիւնը կարճ է լինում“, ասում է առածը, և պ. Զօպանեան մոռացել է իհարկէ, որ „Անահիտ“-ի առաջին տետրում ինքը գրել է հետևեալ տողերը.

«Լինական էր որ կենսունակութեան այս ջերմ ցայտումէն (ռուսահայերի եւ տաճկահայերի բարոյական-քաղաքական վերածնութիւնից) յետոյ, ժողովուրդը, մղուած մանաւանդ համաբախտ ուրիշ ազգութիւններու փրկութեանը փորձիչ օրինակէն, ցանկար այդ բարոյական-ազգային շարժումը իր տրամաբանական եզրակացութեան հասցնել։ Այս իղձը ընդհանուր ազգին իղձը եղաւ. եւ զայն իրագործել փորձելու սկսողները ոչ թէ երիտասարդներն էին, այլ ժողովուրդին ամէնէն ծանրախոհ մասը. Պատրիարք, վաճառականներ ու դիւանագէտներ յանդգնեցան առաջին քայլը առնել. անո՛նք ներկայացուցին ազգին բողոքը՝ քրիստոնեայ Եւրոպային, անոնք բացին ժողովրդին՝ ազատ կեանքի մը հեռանկարը...» (№ 1, եր. 2)։

Այդպէս ուրեմն նոյեմբերին պ. Զօպանեան ոչինչ չունէր նրա դէմ, որ Ներսէս պատրիարք դիմել էր „քրիստոնեայ Եւրոպային“, Բերլինի վեհաժողովին, բայց յունուարին նա այդ դիմումը համարում է բոլոր սխալների սկիզբը և բոլոր ոճիրների հիմնաքարը։ Նոյեմբերին Ներսէս ժողովրդի „ամենէն ծանրախոհ“ անձերից մէկն էր, բայց երկու ամիս յետոյ նա դառնում է տղայամիտ. նոյեմբերին՝ նա ազգի բողոքի արտայայտիչն էր, իսկ յունուարին՝ „թուրք կառավարութեան նպատակներուն գործիք“։ Նոյեմբերին՝ նա „ամենէն ծանրախոհ“ վաճառականների և դիւանագէտների հետ տարեց առաջին քայլը իրագործելու համար այն իղձը, որ „ընդհանուր ազգին իղձն“ էր, իսկ յունուարին դուրս է գալիս, որ նա „ապօրինի ընթացք ունեցած էր իր ազգին ամենէն կենսական գործը քանի մը էֆէնտիներու հետ միմիայնակը կատարելով“, և որ նրա գործունէութեան հաւանողները ոչ թէ ամենածանրախոհ մարդիկ էին, այլ ապուշներ...

Այսպէս են ահա երբեմն գրում անաչառ և լուրջ քննադատութիւնները։

1) Եթէ պ. Զօպանեան ձեռքի տակ ունենար Ներսէս պատրիարքի ճառը ու այն ճառը, որ Անգլիայի պետական քարտուղարի օգնական լորդ Սանդըն արտասանել էր լորդերի ժողովում, եւ ուսումնասիրէր այն շրջանի պատմութիւնը, որ քննադատում է, նա կը համոզուէր, որ Ներսէս պատրիարք շատ հիմքեր ունէր լաւատես լինելու։ Բայց պ. Զօպանեան կարծում է, թէ ուսումնասիրութիւնը պարտադիր է միայն ուրիշների համար, իսկ ինքը կարող է խօսել „հոգւով սրբով“։ Այդ տեսակէտից շատ բնորոշ է այն հանգամանքը, որ պ. Զօպանեանի անագին յօդուածներում չի բերւած ոչ մի վաւերագիր (մինչեւ անգամ 61-րդ. յօդուածի բնագիրը, որ նա աղաւաղած է յիշատակում) եւ որ նրա բոլոր մեղադրանքները հիմնւած են միայն ասէկոսէների վրայ — „կըսէր“, „կըսեն“, „ըսած է“ եւ այլն, որոնք բոլորն էլ նոյնքան ճիշդ են, որքան եւ այն, թէ „Խրիմեան Հայրն արքունիքին մէջ մեծ հմտակրութիւն կը վայելէ՝ կըսեն“։

1) Նախ՝ Նահապետ Եղիազարեանն է, նահատակւած 1898 հոկտեմբերը 14 (26)-ին Մահլամի մէջ։ Տես նաեւ „Դրօշակ“-ի 1897 № 1 եր. 7.

„ԽԱՅԸ“

ԸՆԱԾՈՑԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ 1)

Ցուրտ էր, ձմեռ, բուք-բորան. գիշերն էլ այնքան խաւար էր, այնպէս սարսափելի, որ լեռնային Օ.. գիւղում մարդիկ այդ ժամին էլ չէին յիշում, թէ իրենք

1) Նախ՝ Նահապետ Եղիազարեանն է, նահատակւած 1898 հոկտեմբերը 14 (26)-ին Մահլամի մէջ։ Տես նաեւ „Դրօշակ“-ի 1897 № 1 եր. 7.

երբ և իցէ օր ու արև, լոյս ու ջերմութիւն, պարզ երկինք տեսե՞լ են, թէ ոչ։ Քամի էլ կար, բայց ի՞նչ քամի, ասես թէ մահու աշխարհից էր փչում, որ իր վզվզոցի մէջ ինչ որ սարսուռ ազդող, չարագուշակ բան ունէր. ձիւնի հետ խաղում էր, բայց այդ խաղը դիւական էր. լիզում էր առարկաները, բայց իր շունչը մահացու էր։ Խօմ մենակ մարդիկ չէին, որ մրսում էին, այլ ամբողջ Օ.. գիւղը ասես իր բոլոր խրճիթներով, իր խոտի դէզերով, իր աթարի կոյտերով դողում, սրբթսրթում էր այդ թանձր խաւարի մէջ, այդ դժոխային քամու առաջ, և դժւար էր գիտենալ, թէ այդ դողը միայն ցրտի՞, թէ՞ նաև եւ երկիւղի դող է։ Ախր գիւղը վախենում է բնութիւնից, և ի՞նչպէս է վախենում, նա սարսափում է. ամպրոպն ու կայծակը, քամին ու փոթորիկը նրա համար խօմ բնութեան անմիտ, անխորհուրդ խաղեր չեն, հապա նրանք գալիս են որոշ զարհուրելի նպատակներով. այդ գիտի գիւղացին, ի՞նչպէս չդողայ։ Դեռ լաւ որ կայծակի դէմ՝ խաչի նշանը կայ, իսկ բուք-բորանի դէմ՝ տաք գոմը կայ։ սաքուն կայ։

Վո՛ւ, վո՛ւ, վո՛ւ,—ոռնում էր քամին և ամէն անգամ այդ զարհուրելի կաղկանձոցի հետ Մէլիք-Շահինի սաքուի երկու կողմի բազմականները դադարում էին խօսելուց, ցած էին առնում բերաններից չիբուխները, իրար երես էին նայում և նոյնիսկ մի ներքին պահանջ զգում իրար աւելի մօտ գալու, աւելի կուչ գալու։ Տէ՛ր Աստուած, ձիւնը լա՛ւ, ցուրտն էլ իր տեղի՞ն, բայց այդ քամին, ի՞նչ էր ուզում այդ սարսափելի քամին, այն ի՞նչ էր ասում։ Ոչ ոք չէր համարձակւում բարձրաձայն բացատրել այդ ահաւոր տարերքի լեզուն, բայց ամէնքն էլ լաւ հասկանում էին. դա ամէն մէկի համար ճակատագրի հսկայական երգն էր, որ քամին, այդ յաւիտենական ուխտաւորը, հիւսել է աշխարհի ցաւերից, թոյլի հառաչանքից, անզօրի ճիչից, թշուառի լացից, խեղճի աղերսից. ոչ մի ցաւոտ հնչիւն չի մեռել անսահմանութեան մէջ. ամէնամեղմ, սրտաճմլիկ մրմունջներից սկսած մինչև լեռնագղորդ գոչիւնները, իրրև հաւատարիմ աւանդապահ, հաւաքել է քամին իր եթերային ծոցում, և մերթ շշթայում է բարձրագոյն լեռների կատարներին ու լայնածաւալ խաւար այրերի մէջ, մերթ բաց է թողնում, որ ցած գան, հնչեն աշխարհի վրայ, ցաւոտ ու սպառնալից ձայներ հանեն, խօսեն մարդկանց սարսափած ականջներում անխուսափելի ճակատագրից... Այսպէս էին մտածում սաքուի մէջ սարսափած գեղջուկ գլուխները։ Ահա թէ ինչու քամու որոտը իւրաքանչիւրի համար մի զարհուրելի համերգ էր, որի մէջ կար և մեռելների հառաչ, և սատանաների ճիչ, անճոռնի կանչուրտոց, և քաղցած գայլի ոռնոց. չէ՞ որ սրանք ամէնքն էլ սիրում են բուք-բորանին դուրս թափուել իրենց ապաստարաններից՝ բնութիւնն աւելի սարսափելի դարձնելու համար իրենց անճոռնի աղաղակներով։ Օ՜, ի՞նչ աղաղակներ, մազեր էին դիզանում, լեզու էր չորանում, շունչ էր բռնւում։

Վո՛ւ, վո՛, վո՛ւ, ը՛զզ... Քամին է՛լ աւելի սաստկացաւ, սաքուի կտուրն այժմ ճռճռում էր, երբեմն էլ ասես թէ մէկը ոտքով էր թակում։

— Ա՜հ, դժոխք է դուրսը, ասաց նստողներից մէկը խօսած լինելու համար. դուշմանս հիմա սարում չլինի։

— Սարո՞ւմ, պատասխանեց մի ուրիշը հեգնութեամբ. սաքի թէ դու ջան կ'անես հիմա մինչև մեր այգիները գնալ, որ սարերից ես խօսում. չե՞ս լսում ձայները... երկինք-գետինք իրար է դիպել էէ...

Կրկին լռութիւն տիրեց. խօսել չէր լինում, մտածելու շատ բան կար։

Գոմի դուռը հանդարտ ճռռաց. ամէնքը դէպի այն կողմը նայեցին. կիսախաւարի մէջ գծագրուեց մի մարդու հասակ, որ եափունչու մէջ կոլոլուած ներկայացնում էր մի ձիւնակոյտ. պարզ էր, որ մարդը երկար ժամանակ ըքի տակ էր մնացել։

— Բարի երեկոյ, ասաց նորեկը, թափ տալով եաւ փունչու վրայի ձեան հաստ շերտը։

— Աստծոյ բարին, վա՛յ խեղճ խայ, արի՛, արի՛, առաջ անցիր, տնաշէն փէտացար—ձայն տուին այս ու այն կողմից՝ նստողները սրտացաւ եղանակով—խայտին տեղ տուէք, թող նստի։

— Հա՛, վալլահ փէտացայ, ասաց նորեկն առաջանալով, էլ դուրսը մնալու ճար չկայ, ասես թէ երկինքը փուլ է գալիս, գիւղի մէջ էլ մարդ խեղդւում է. ձիւն ու քամի. օ՜, ի՞նչ բուք է. ի՞նչ բուք է. ասացի մտնեմ սաքուն, տաքանամ, դուրս ելնեմ։

Մարդը նստեց։

Բուխարու վերև, փոքրիկ մրոտ ակնատի մէջ՝ հանդարտ պլպլում էր ձէթի ճրագը. նրա աղօտ բոցն օրօրւում, դողդողում էր դանդաղութեամբ, ասես թէ նա էլ էր վախենում քամու վզվզոցից. բայց էլի մի խղճուկ լոյս կար, այնքան, որ թանձր փափախների ստուերների տակ մի քանի դէմքեր գծագրւում էին. նորեկի վրայ էլ ընկան մի քանի դողդոջուն, դեղնագոյն շողեր. գեղջուկ մի դէմք էր այն, ուր չարքաշ կեանքը գրել էր իր կոշտութեան կնիքը, իսկ ցաւերը բուն էին դրել հաստ կաշի խոշոր ծալքերի մէջ. երիտասարդ մարդ էր, բայց երևում էր, որ շատ էր ապրել. թանձր բեխերի տակ երևում էին երկու հաստ շրթունքները պինդ իրար վրայ սղմած, որ տալիս էին նրա դէմքին յատուկ արտայայտութիւն. աչքերը մանր էին, բայց շարժուն, կրակոտ։ Գիւղի պահապանն էր նա, վարձած գիշերապահը։ „Խայ"-ներ շատ կային Օ.. գիւղում, գնացին. այս մէկը մնաց ուշացած կռունկի պէս. մուրալ չուզեց, պահապան եղաւ. տեղացիք անունը լաւ չգիտէին, Նախօ կանչելու տեղ՝ ոմանք Մխօ կանչեցին, ոմանք էլ Մկօ ասացին, բայց վերջիվերջոյ՝ խօսքերը կարծես մէկ արած՝ սկսեցին պարզապէս „խայ" կանչել։ Այսպէս լաւ էր, հեշտ էր. համ էլ՝ իրաւ որ նա „խայ" էր, որովհետև Հայաստանցի էր, Ողմը գիւղացի։ Ահա այս „խայն" էր, որ մի անկիւնում պատի տակ տեղ գտաւեց, կծկւեց, տաղ արեց. սաքուն տաք էր։

Բուքը շարունակւում էր. կատաղի քամին վիրաւոր գազանի պէս մռնչում էր, ոռնում էր։

— Այսպիսի գիշերւայ է ռաստ եկել խեղճ ողորմելին հա՛—ասաց ռէս Գէվօն—էլ ի՞նչ հոգը տար գլխին։

Խօսքը մի գիւղացու մասին էր, որ մի քանի օր առաջ լեռներում ըքի բռնելով՝ խեղդւել էր։

— Քանի՞ ասինք մի՛ գնա, էս ձիւն ու ձմրանը չօլերը մի ընկիր, կնիկ՝ երեխայի տէր ես, վրայ բերեց միւսը։

— Է՛, ի՞նչ ես անգէտ անգէտ խօսում, մարդի ճակատին էն էր գրւած, ասաց Մէլիքը. նա պիտի գնար, նա պիտի խեղդւէր. ճակատագրից ո՞վ կարող է փախչել։

— Իրա՛ւ, իրա՛ւ, Մէլի՛ք, ասացին մի քանի հոգի, ճակատի գրածը չի ջնջւի։

ճակատագիր, ամենազօր կոյր ճակատագիր. . . Գիշերւայ այս զարհուրելի ժամին, կիսախաւար, գետնափոր սաքուստ, քամու այս անճոռնի գոռոցի տակ, որ սարսափելի բաներ էր պատմում՝ այդ կոյր զօրութեան մասին, դժուար էր խօսակցութեան աւելի յարմար նիւթ գտնել։ Իւրաքանչիւրն իր դիտողութիւններն արեց այդ մասին. ամենքն էլ հասան այն եզրակացութեան, որ մարդը խաղալիք է ճակատագրի քմահաճոյքին, որ նրա առաջ անզօր են մարդկային բոլոր հնարքները, նրա բոլոր խելքը, եռանդը, աշխատանքը։

— Ես ճակատագրին չեմ հաւատում, ասաց մի ձայն սաքուի մի անկիւնից։

Ամենքի հայեացքները դարձան դէպի այն կողմը . . . Զարմանքն ընդհանուր էր։

— Ո՞վ է այդ „ժժդահան", ասաց Մէլիքը հեգնութեամբ։

— Ծառա՛դ եմ, ե՛ս եմ, Մէ՛լիք. ես ճակատագրին չե՛մ հաւատում, կրկնեց նոյն ձայնը յամառութեամբ։

Մարդիկ չգիտէին ծիծաղե՞ն, թէ զայրանան. ճակատագրի ամենակարող ուժին չհաւատացողը ողորմելի „խայ"-ն էր։

— „Էծերի քոսոտը կը կատաղի", սուտ չէ ասած, մտմտաց Մէլիքը կէս հեգնութեամբ, կէս բարկացած։ Իսկապէս ամենքն էլ զայրացած էին. և ի՞նչպէս չզայրանային. Մէլիքը, հարուստ, զօրեղ Մէլիքը՝ հաւատում էր ճակատագրին, վախենում էր նրանից. ուէս Գէվօն, որի ճիպոտի առաջ բոլորը դողում էին ինչպէս ուռի տերևներ, սարսափում էր ճակատագրից. տէրտէրը խո՝ ինչ քարոզէր, վերջը ճակատագիրն էր. ամենքն էլ ընկճուած էին այդ աներևոյթ զօրութեան առաջ, ամենքն էլ սոսկում էին նրանից, մէ՛կ այս ողորմելի, քնձռոտ „խայ"-ը ճակատագրին չէր հաւատում, չէր վախենում նրանից։

— Այո՛, ես չեմ՝ հաւատում այդ ձեր ճակատագրին, կրկնեց „խայ"-ն այս անգամ աւելի կտրուկ, աւելի յանդուգն ձայնով, երբ տեսաւ իր վրայ ուղղուած արհամարհական հայեացքները, և ես ձեզ հէնց այս րոպէիս կարող էի ցոյց տալ, որ իրաւունք ունեմ, բայց ափսո՜ս որ պիտի դուրս գնամ գիւղը շրջելու։ Եւ նա վեր կացաւ, պատրաստուելով դուրս գնալ։

— Մնա՛, մնա՛, „խայ", գոռացին մի քանի ձայներ՝ հետաքրքրուած. ուէս, ասա թո՛ղ մնայ. հիմա գիւղը չթալանեցին։

Ուէսի ցանկութեամբ „խայը" կրկին նստեց իր տեղը։ Ամենքի հայեացքները դէպի նա դարձան, ամենքը սպասում էին, թէ ի՞նչ պիտի պատմի այս մարդը, որ այդպէս յանդուգն յամառութեամբ արհամարհում է ճակատագիրը։

— Էն տարին—այսպէս սկսեց „խայը"—տասը հոգի էինք, տասը գժեր, տասը բոց ու կրակ ունէինք կըրծքերիս տակ, միատեսակ կրակ, միևնոյն կայծից բռնկուած, որ վառում փոթոթում էր մեզ։ Միատեսակ անվախ սիրտ ունէինք, բայց ի՞նչ սիրտ . . . Դա ծո՛վ էր, վշտերով ալէկոծ, ամօթից կապտած, դա խարոյկ էր՝ վրէժով վառուած . . . Ամիսներ էր, ինչ թափառում էինք չօլից՝ չօլ, սարից՝ սար, ձորից՝ ձոր. օձերի հետ էինք ջուր խմում, քարէ անկողնի մէջ բոպէներով հանգիստ առնում։ Դէ՛, ի՞նչ անէինք. շատ երկար կուլ տուինք մեր անարգանքը. համբերութիւններս ահագին էր, բայց մեր դուշմանի անաստուածութիւնը, նրա անսիրտ անամօթութիւնը անսահման էր. էլ ապրել չէր լինում, հաց չկար, եղածն էլ կուլ չէր գնում, թոյն ու լեղի էր դարձել . . . Մենք էլ ամէն բան թողինք, տուն ու ընտանիք, մալ ու միւլք և մեր պատուի թուք ու մուրը սրբելու համար մի մի հրացան առանք, սարերն ընկանք։ Այսպէս լա՜ւ էր. . . ազա՜տ էինք. . . Օ՜, երբ մարդ այնպիսի ցաւեր ունի, ինչպիսին մերն էր. երբ մարդու քոյրն ու մայրն է վիրաւորուած, երբ զաւակն է սպանուած, երբ ծերունի հայրն է անարգուած,—այն ժամանակ էլ աշխարհում ոչինչ, ոչի՛նչ չի կարող նրան մխիթարել. կուրծքը եռում, բորբոքւում է բոցերի մէջ. արցունքն անզօր է զովացնել նրան. սփոփիչ խօսքերը ծաղր ու ծանակ են. . . Բայց երբ մարդ սղմում է կրծքին հրացանի տաք փողը պի՞նդ, պի՞նդ, երբ մարդ տեսնում է, թէ ինչպէս է նա մահ որձկում արիւնապարտ թշնամու գլխին, այդ ժամանակ, ո՜, միայն այդ ժամանակ՝ մարդու սիրտը հովանում է, հոգին հանգստանում, ամօթից էլ չի կարմրում երեսը, զգում է, որ ինքն էլ մարդ է, փափախ ունի գլխին, պատիւ ունի. . .

Քիւրդերն ու թիւրքերը մեզ ասում էին „ֆէդայի", իսկ հայերն ասում էին „վրիժառու ոգիներ"։ Մեր առջևից սարսափն էր գնում, մեր յետևում մահն էր փրուում։ Սարերի միակ տերը մնացինք մենք ու արծիւները. մի քիչ նման էլ էինք իրար. միատեսակ էինք յարձակուում մեր որսերի վրայ։ Քանի՞ տեղ հասանք, քանի՞ գաղան թիւրքի ու քիւրդի զզուելի մուրազը փորուեց թողինք։ Շատ անգամ մեզ փնտռում էին, բայց մենք դարձել էինք աներևոյթ դևեր, ամէն տեղ էինք և ոչ մի տեղ. ֆէդայիին գտնելը հեշտ չէր, հանդիպելն էլ զարհուրելի։ Այսպէս էինք մենք, և սպասում էինք մեր ճակատագրին. մենք հաւատում էինք նրան։ Մի օր Սիմ լեռան կատարին էինք, որ մեր պաշարը վերջացաւ։ Ինձ վիճակեց պաշարի գնալ։ Ես գիւղերը ճանաչում էի, բայց չէ՞ն էին, թէ՞ աւերակ, բնակիչներ կայի՞ն, թէ՞ գաղթել էին,—այդ ես չգիտէի. ինչ և լինէր պիտի գընայի, ինչպէս լինէր պիտի պաշար ճարէի։ Ես ցած իջայ մեր որջից օրը ցերեկով, առանց զէնքի, առանց նոյնիսկ ձեռնափայտի. մտածում էի, թէ թշնամու չեմ պատահի, եթէ պատահեմ էլ, անզէն լինելս գուցէ ինձ փրկի. իսկ թէ չեմ փրկուի, երևի ճակատագիրս այդպէս է։ Եւ այսպէս ես գնում էի. . . Բաւական ժամանակ շուրջս մեռելութիւն էր, ոչ ոք չկար. առջևս մի սար էր, պէտք էր բարձրանալ և ապա վար իջնել յաջորդ ձորը։ Բարձրացայ, հէնց կատարին առջևս ցցուեց մի քիւրդ, մի համիդիէ ոտից գլուխ զինուած։

— Բարև, քիրվա՛, ասացի ես անհոգ եղանակով։

— Բարև ֆլա՛, պատասխանեց քիւրդը, բայց չանցաւ այլ կանգ առաւ՝ նայեց ինձ։

Ես կանգ չառայ, այլ առաջ անցայ, շարունակեցի ճանապարհս. բայց զգում էի, որ քիւրդը տակաւին կանգնած հետևում է ինձ հայեացքով։ Ես չէի շտապում՝ կասկածի առիթ չտալու համար։

— Հէ՛յ, ֆլա՛, կա՛ց, կա՛ց, լսեցի յանկարծ քիւրդի ձայնը. յետ նայեցի, կանգ առայ։ Ճակատագիրս է մտածեցի ես. և ճիշդ որ՝ ճակատագիրը հէնց այս քիւրդի կերպարանքը կարող էր ունենալ. հրացանն ուսին, կեռ թուրը կողքին, սպիտակ փղոսկրէ կոթով մի դաշոյն գոտիկը խրած, դէմքը զզուելի, աչքերը կատաղի իսկ և

իսկ քաղցած գայլի աչքեր։ Նա մոտեցաւ ինձ։

— Էս օրերում, էս տեղերում ո՛չ մի ֆլա սիրտ չէր անի երևալ, ասաց քիւրդը. դու բարի պտուղ չես երևում. ո՞վ ես, ո՞ւր ես գնում։

— Քիւրդ, ասացի, ժամանակները վատացել են, բայց մի՛ մոռացիր, որ մենք հարևաններ ենք. քեզ իբր հարևանի ասում եմ, որ ես խուլթեցի եմ, մեր կողմերում սով է, այդ խոմ գիտես. Դերջան եմ գնում երախաներիս համար մի քիչ հաց ճարեմ. թո՛ղ ինձ հանգիստ անցնեմ, գնամ։

— Չէ՛, ֆլա՛, խաբել չես կարող ինձ, դու բարի պտուղ չես։

— Քի՛ւրդ, Աստուած ունես, ինչպէս տեսնում ես՝ վըրաս զէնք չունեմ, գրպանումս դանակ չկայ. թէ գազան էլ դառնամ, երկու ձեռքով ի՞նչ կարող եմ անել, աղաչում եմ քեզ, թո՛ղ անցնեմ, գնամ։

— Առաջ անցի՛ր, քեզ գայմագամին պիտի տանեմ։

Գայմագամի՞ն. . . այս արդէն սարսափելի էր, որովհետև մեզ վաղուց փնտռում էին։

— Քի՛ւրդ, գայմագամին մի՛ տար ինձ. թէև դրանից իմ անձին վնաս չկայ, բայց կ՝ուշանամ, երեխաներս մեղք են, սովից կը մեռնեն. Աստծու սիրուն, քի՛ւրդ, բրա՛, քիրվա՛, թո՛ղ ինձ երթամ. . .

Քիւրդն անողոք մնաց։ Ճակատագիրս է, մտածեցի ես, և գլուխս քաշ արած, առաջ անցայ։ Ի՞նչ կարող էի անել. ուժը նրանն էր, հրացանը՝ նրա ուսին էր, դաշոյնը՝ նրա գոտկումն էր, թուրը՝ նրա կողքին. ի՞նչ անէի երկու ձեռքով։ Ճակատագիրս էր։ Գնացինք։

Շուրջս ամէն բան գեղեցիկ էր. արևը պայծառ, երկինքը պարզ, լեռները կանաչ, ծաղիկներն անուշահոտ, օդը թռչուններով լի, ամէն կողմ կեանք, խնդութիւն։ Վերև՞, շա՞տ վերև՝ օդի մէջ ճախրում էր մի արագիլ, ազատ, համարձակ։ Ես, չգիտեմ ինչու, իմ վիճակի բոլոր սարսափը մոռացած, նայում էի այդ թռչնին, անթարթ, երկա՞ր։ Նախանձո՞ւմ էի արդեօք, թէ ուրիշ մի բան կար, որ գրաւում էր ինձ, ես այդ չգիտէի, բայց նայում էի։ Երկար ճախրում էր արագիլը. մէկ էլ յանկարծ սկսեց պտոյտներ անելով դէպի վար իջնել և շեշտակի թափով ձգեց իրեն մեզանից շատ մօտիկ մի բլրի վրայ։ Ես հետևում էի. այնտեղ մի մեծ օձ կար, որին նշմարել էր արագիլը։ Թռչնի թևերի շփշփոցից սողունը կծկուեց, գլուխը թագցրեց մարմնի օղակների տակ։ Սկսուեց մի սարսափելի կռիւ։ Մենք երկսով էլ կանգ առանք։

— Տեսնո՞ւմ ես, ասաց քիւրդը, ֆլան որ կայ՝ օձ է, այսպէս պէտք է ջախջախել նրան։

Ես պատասխան չունէի. ես դիտում էի։ Արագիլն իջնում էր, կոցով հարուածում օձին և վրայից անցնում. այդ ժամանակից օգտուելով՝ օձն աշխատում էր փախչել, բայց հազիւ մի քանի օղակ արած, սարսափելի թշնամին սաւառնում էր նրա գլխին, օձը կրկին կըծկուում էր, կրկին ծածկում իր գլուխը։ Իրաւունք ունէր քիւրդը. իմ և օձի վիճակի մէջ մեծ նմանութիւն կար։ Օձի էլ ճակատագիրը հասել է, է՛լ փրկութիւն չունի, մտածեցի ես։ Այս միտքը նոյնիսկ ինձ մի փոքր մխիթարում էր։ Կամաց կամաց արագիլն աւելի յանդգնեցաւ, հարուածներն աւելի յաճախ և մահացու դարձան. վերջիվերջոյ օձին արդէն բաւական թուլացած համարելով՝ նա ցած իջաւ նրա կողքին և արդէն շուրջը քայլելով երկար կոցով վերջին հարուածներն էր տալիս։ Օձը շարունակում էր գլուխը թագցրած պահել, շարունակում էր ըստ երևոյթին թոյլ թոյլ պաշտպանուել։ Արագիլը խիստ մօտ էր նրան այժմ։ Մէկ էլ յանկարծ մի զարմանալի բան պատահեց։ Այդ կիսամեռ սողունը վերջին ճիգերը հաւաքեց, դուրս հանեց գլուխը, բացեց իր օղակները, պոչի վրայ ցցուեց, ձգուեց ինչպէս մի խարազան և մահացու օղակներով արագիլի երկար վզին փաթաթուեց։ Իզուր անցան արագիլի բոլոր ջանքերը դուրս կորզելու իր վիզը այդ մահաբեր օղակներից. նա թևերը թափթափ էր տալիս, կտուցը գետնին քսում, յետ յետ էր քաշւում, առաջ անցնում, գետնին թաւալում, փորձում էր վեր բարձրանալ, թռչել, փախչել — ապարդի՞ւն ջանքեր. . . Օձի յուսահատ կատաղութիւնը զարհուրելի էր. նրա օղակները սղմւում էին ու սղմւում, և վերջիվերջոյ թռչունը փուեց բլրի կրծքին անկենդան . . . Օձը քաշուեց, անյայտացաւ։

Քիւրդը լուռ էր այժմ։ Նա ինձ նայեց։ Մեր աչքերն իրար հանդիպեցան և մի քանի վայրկեան մենք անկարող եղանք հեռացնել իրարից մեր հայեացքները։ Մեզանից իւրաքանչիւրն աշխատում էր հասկանալ, թէ ի՞նչ է մտածում իր հակառակորդը այդ բոպէին։ Ո՛չ մի կասկած չկար, որ երկսիս գանգերի մէջ եռացող մտքերն էլ միմեանց վերաբերմամբ ահաւոր էին։ Այդ մենք հասկանում էինք, կարդում էինք իրար աչքերում փոխադարձաբար. չէ՞ որ աչքերը մտքի ակամայ դաւաճաններն են։ Ես հասկացայ, որ այդ գաղանը՝ օձի անակնկալ յաղթանակով կատաղած, որոշել է ինձ սպանել. ի՞նչ ասել է քիւրդի համար մի հայ սպանել՝ անցնել։ Այդ ես շատ լաւ կարդացի նրա աչքերում, որոնց արտայայտութիւնը այժմ աւելի չարագուշակ էր. օ՜, ես ճանաչում էի քիւրդի աչքերը։ Բայց ես էլ էի մտածում։ Օձի և արագիլի կռիւը իմ մէջ էլ մի փոփոխութիւն առաջ բերեց։ Ես դեռ երբեք չէի լսել, թէ օձը արագիլին կարող է խեղդել. յայտնի էր որ արագիլն է օձի մահաբեր թշնամին, նրա մարմնացած ճակատագիրը. այդ ի՞նչպէս պատահեց, որ այսօր այդ ճակատագիրը սխալ. դուրս եկաւ։ Աստուած, որ չի թոյլ տալիս, որ օձի նման զզուելի սողունն անգամ անարդար զոհ դառնայ արագիլին, նոյն Աստուածը մի՞թէ պիտի թոյլ տայ որ այս քիւրդը, օձից տասն անգամ զզուելի այս արարածը՝ իմ ճակատագիրը տնօրինի։ Չէ՛, ճակատագիրը սխալ է, մտածեցի ես. . . պիտի ճար տեսնել։

Եւ ես սկսեցի մտածել, երկա՞ր, երկա՞ր. . . Հնարք էի փնտռում. բայց ի՞նչ հնարք. գոնէ մի դանակ էլ չունէի։ Այդ բոպէին աչքս ընկաւ քիւրդի այն սիրուն դաշոյնին, որ խրել էր իր գոտին. . . — Ա՜խ, գոնէ այն իմ ձեռքում լինէր, միայն այն։

— Գնա՛, որոտաց քիւրդը. ի՞նչ ես կանգնել։

Ես շարժուեցի. մենք մտանք մի ձոր, խուլ, ամայի ձոր։ Քիւրդն սկսեց իր շուրջը նայել. նրա շարժումներն անհանգիստ էին. երևի չարագործն էլ իր անմեղ զոհի առաջ վճռական բոպէին գէթ մի փոքր դողալ գիտէ։ Նա յաճախակի ցած էր առնում հրացանն ուսից, կըրկին ուսն էր ձգում։ Ես զգացի, որ մօտ է վախճանս, բայց ես այլևս չէի ուզում մեռնել. երբ օձն ապրելու իրաւունք ունի, մարդը, այն էլ հայ-քրիստոնեան՝ չի կարող այդ իրաւունքից զրկուած լինել։ Ես կամաց-կամաքայլերս նւազեցրի։ Ես անելիք ունէի. ինձ համար ան-

հրաժեշտ էր, որ քիւրդի առջևը չլինեմ. դա վտանգաւոր էր։

— Շո՛ւտ, շուտ գնա՛, շտապեցնում էր քիւրդը։ Նա աշխատում էր անդադար, որ ես իր առջևը լինեմ. այդ ես գիտէի. իսկ ես աշխատում էի նրա հետ հաւասար գծով ընթանալ։

Կարծես թէ մենք հասկանում էինք իրար. մենք լուռ կռւում էինք. կեանքի մահու կռիւ, որ ահաւոր էր մանաւանդ իր դաւաճան խորհրդաւորութեամբ...

Ես կանգ առայ յանկարծ. պէտք էր տրեխիս թելը պնդացնել։ Քիւրդը հասաւ ինձ, կանգ առաւ։ Ես առանց գլուխս բարձրացնելու վարից դիտեցի նրա դիրքը. նա իմ աջ կողմումն էր ցցւած. դաշոյնի սպիտակ կոթը երևում էր գօտկի միջից։

— Շո՛ւտ արա՛, պրծի՛, փլա՛, կոչեց նա զայրացած, տեսնելով իմ դանդաղութիւնը։

Ես յանկարծ գլուխս բարձրացրի, քրդի գօտկից վայրկենապէս դուրս քաշեցի դաշոյնը, և մինչև որ նա ապշած ու սարսափած պաշտպանւելու որ և է փորձ կ'անէր, փայլուն դաշոյնը մինչև կոթը ահագին թափով նրա կուրծքը մխեցի։ Վայրենին ոռնաց և գետին գլորւեց...
Ես փրկւած էի։ Ահա այն փրկարար դաշոյնը...

„Խալը" դուրս քաշեց իր գօտուց մի փղոսկրէ կոթով դաշոյն ու դրեց բազմականների առաջ։ Ճրագի առաջ փայլուն պողպատը պաղ պաղ փայլ էր արձակում։ Ամէնքը ծնկների վրայ ընկած, լուռ դիտում էին այդ ահաւոր գործիքը, որ մարդկային անզօր ձեռներում լուծել էր ճակատագրի բարդ հանգոյցը։ Փոքրիկ, կորած, ողորմելի „խալը" հսկայ դարձաւ ամէնքի աչքին. նա „աժդահա" էր, որ իշխում էր իր ճակատագրի վրայ, որ ծաղրում էր իր բախտը։ Նա իրաւունք ունէր։

— Ես ճակատագրին չեմ հաւատում, կրկնեց այս անգամ „խալը" վեհ յամառութեամբ. բայց այդ բառերն այս անգամ ծիծաղ ու զայրոյթ չառաջացրին, այլ պատկառանք և մտքե՛ր, մտքե՛ր, փրկարար մտքե՛ր, ազատի՛չ մտքեր, սրբազա՛ն խորհուրդներ։

— „Խալը" վերցրեց իր դաշոյնը, գօտիկը խրեց, դուրս գնաց գոմի դռնից, բազմականները մնացին լուռ...

Դրսում քամին շարունակում էր ոռնալ, բայց նա այլևս չէր խօսում ճակատագրի հզօր ուժից։ Քամու բազմազան աղաղակների մէջ մարդիկ այժմ որոշում էին ձայներ, որոնք անվերջ „վրէժ, վրէժ" էին աղաղակում...

ՂԱՐԻԲ.

ՄԱՀԱԳՈՅԺ

ՍԱՐԳԻՍ ԹՈՒԽՄԱՆԵԱՆ (Քաջունի, Ապօ) անողոք հիւանդութենէ մը կը մեռնի, 1898 նոյեմբեր 20-ին (հ. տ.) 38 տարեկան հասակին մէջ։

Բնիկ Չմշկածագցի, պաշտօն վարած է Տրապիզոնի համազգային վարժարանին մէջ եւ հոն ստացած է իր ընկերակիցներէն „Քաջունի" մակդիրը, որ ժողովրդական դարձած էր։

Հաստատուելով ·· քաղաքին մէջ, ինը տարի անընդհատ գործած է յեղափոխական ասպարէզին վրայ։ Երբեմն անդամ էր Հնչակեան Կուսակցութեան տեղական մասնաճիւղին վարչութեան, իսկ վերջը, երբ Դաշնակցութիւնը մուտք գործեց հոն, տեղին նորակազմ Կոմիտէին առաջին անդամը եղաւ։

Ուղղամտութիւն եւ պարտաճանաչութիւն իր բնաւորութեան յատկանիշերն եղած են։

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆ ստացած է՝

Ա.-էն 1 ֆրանք, — Հ. քաղաքէն Մ. Խ. 20 ֆրանք, — Կրայօվայէն 29 ֆրանք հետեւեալ անձերէն՝ Պ. Փ., Մ. Մանուէլ, Մ. Ս. 5-ական, Ս. Վ., Ց. Ա. (Դարան) 3-ական, Լէֆթէր, Կ. Ցակոբ, Թ. Մ., Ա. Պ. 2-ական, — Ցիւրիխէն Ժահր 5 ֆրանք, — Միացեալ Նահանգներու Լօրէնսի Կոմիտէին եւ քանի մը համակիրներու կողմէն՝ 22 դոլար 4 սէնթ։

ՈՍԿԵՅԱՆՔԻ Կոմիտէն՝

Որոտում խ. (նոյ. 98 — յունւար 99) 60 դահեկան, Արփին խ. 5, Շանթ խ. 7, Կարկուտ 10։ — ԱՐՇԱԿԱՒԱՆԷՆ՝ Հայաստանցի եւ Երկիւղած խմբեր (Նւէր ու ամսավճար) 75, Հայաստանցի խմբէն Անձնազոհ 70, Երկիւղած խ. 30, Փիլիպպոս 10։ — ՍԵՒ-ԲԵՐԴԷՆ՝ Հ. (Լ. Ս. Կ.) 3 օսմանեան ոսկի (միամեայ վճար 1899-ի)։ Համագումար 591 դահեկան։

ՆԱՒԱՅԱՆԳՍՏԻ Կոմիտէն՝

Աւետիքի զուտ հասոյթից ստացւած բաժին 188 ռուբլի 73 կոպէկ, Աղբիւր օգնական 51, Մ. Փ. 5, Ա. Ա. 1. — ԿԱՐՄԻՐ քաղաքից՝ Չիթախ 50, Գրիգոր Ա. 5. — ԳԱՂԹԱՎԱՅՐ-ից՝ Նոր գիւղի Ցօժարակամ խ. 10, Ցարութիւն 2. — ԿԼՈՐԻԿ-ից՝ Թիւրքմէն 100։ Գումար 412 ռուբլի 73 կոպէկ։

Nr 8-ով հանգանակւած՝ Ոմն 15 ռուբլի, Մի Ոմն 10, Փոքրիկ 10, Հալալզատէ 10, Ջանազանք 12 ռ. 50 կ., Nr 30՝ 5. 50, Նազարեանց 3, Արուսեակ 2, Nr 22՝ 1. 50, Դարա-գոշ 1։ Գումար 70 ռուբլի 50 կոպէկ։

ԱՒԱՐԱՅՐ-ի „Պետօ" խմբի յունւար ամսավճարը 12 ռուբլի, ՎԱՋԳԷՆ մասնաճիւղից 36, ՋՐԱՇԷՆ-ի կանանց „Անահիտ" մասնաճիւղից 43 եւ 119, Շառաւիղ խմբից պատկերների վաճառումից 12, Ճանապարհորդից 5։ Գումար 227 ռուբլի։

ԿՈՑՍ քաղաքի „Զգայուն" խմբից 1898-ի հոկտ. նոյ. դեկտ. ամսավճարները՝ Աչեմօվ առաջին 25 ռուբլի, Վարդ 9, Արամ 6, Աչեմօվ երկրորդ 5, Արաքս, Երկաթ, Արսէն, Արշակ, Վաղարշակ, Զգոյշ, Արդարասէր, Ծաղիկ, Ախուրեան, Արարատ, Բալի 3-ական, Հացեր 4 ռ. 50 կ., Մայրաքաղաք եւ Աստւածաշէն 3, Սիգար եւ Խօջաբէկ 2, Ցաւութիւն խոստչուրցի 5։ Գումար 92 ռուբլի 50 կոպէկ։

ԱՄԱՐՍՆՈՑ-ի „Մահ" խմբից՝ ամսավճարներ 25 ռուբլի, նւիրատւութիւն „Խենթ" բժշկի միջոցով Վարաժնունի, Վանեցի, Արսլան, Արթուն, Աւագ Սահակեան 2-ական, Քաջ Վարդան 1 ռ. 50 կ., Վիշապ, Երիտասարդ, Ազգասէր, Աւագ խնծորեկցի, Աւագ, Վարդան, Դանիէլ, Ցոլակ, Մէլիք, Ռշտունի, Աշըդ, Ցամառ, Պապոյեան, Թաղօս, Ներսէս մէկմէկ ռ., Մաղաք, Փելիկ, Արմատ, Քէլէշօվ, Առիւծ 50-ական կոպէկ։ Գումար 54 ռուբլի։

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ 856 ռուբլի 73 կոպէկ։

ԲԱԼԿԱՆԵԱՆ Կեդր. Կոմիտէն՝

ՄԱԿԵԴՈՆ Կոմիտէէն՝ Հայուհեաց „Շաքէ" ընկ. (յուլիսէն հոկ.) 85 լեւ, նոյն ընկ. (նոյ. դեկ.) 70, նոյն ընկ. անցեալ տարիէն 3, խաղի տուգանքէ 80 սանթիմ, երկու բժիշկներէ 9. 50, Թորգոմեան խումբ (օգոստ.-էն դեկ.) 16, նոյն խ. վիճակահանութենէ 28, Բաբկէն-Սիւնի խումբ (օգոստ.-էն դեկ.) 57, Արեւելեան խումբ (հոկտ.-էն դեկ.) 48. 50. — ՀԱՍՔՕՎՕ-ի Փուշիկ խումբ 9. 50, Ոմն պօլսեցի 1, Խ. Մ. 1, Ոմն 1. 50, Պարոյր 1. 50, Վահան 2, Բահ 2, Ո. Թ. 2, Մ. Բ. 1. 50, Ա. Է. 1, Մ. Ի. 1, Պ. Յ. 50 սանթիմ, Ս. Ի. 1, Ապրօ 1. 50, Վարժապետ 3. 50, Զօրք 5, Սիմէօն ծերունի 5։ Գումար 358 լեւ 30 սանթիմ։

ՀՕՎԻՑ Կոմիտէէն՝ Փետուր խմբի ամսականներէ (ապրիլէն հոկտեմբ.) 42 լեւ, Փետուր խմբի զանձանակէն 4. 50, Բլուր քաղաքի Փետուր խմբէն 42, ՍՕՓԻԱ քաղաքի Կոմիտէէն՝ Բիւզանդ, Վահրամ, Վաղարշակ, Վահէ, Արշակ, Աշոտ 6, Սիրավառ խմբի մարտ ամսականները 10, Սարգիս Թօրօսեանէ 10։ Գումար 114 լեւ 50 սանթ.։

ԿԱՅԻՐԷԻ Կոմիտէն՝

Բռունցք խ., Գեղամ 20-ական դահեկան, Արսլան, Արարատ, Հայկազ, Կայծակ, Հայկազ Մ.-ի ձեռամբ, Պերճ, Ջերմուկ, Բիքալ 10-ական, Ճըլըլիկ 5 եւս 5։ Գումար 130 դահեկան։

Խմբագրութեան դիմել հետևեալ հասցէով՝
Rédaction du Droschak, Genève (Suisse)